կեանքի մէջ աջ ու ձախ ուսերուն վրայ նստած էին, որոնք կենդանութեան ատեն մարդուն գործած բարի ու չար գործերը գրի անցուցած էին եւ յաճախ պահապան հրեշտակ կամ Գրող կը յորջորջուէին: Չար հրեշտակը, ճամբան, օգնութեամբ ուրիշ չար ոգիներու՝ բարի հոգիին վրայ կը յարձակի եւ կ'ուզէ զայն իր իշխանութեան ենթարկել, սակայն բարի հրեշտակը կրակէ սուրով կը դիմադրէ անոնց եւ հոգին կը պաշտպանէ[28]: Այս տեսութիւնը անո՛վ իրանեան է որ կը պատկերացնէ երկինք ճամբորդելու ժամանակ հոգւոյն ենթարկուած չար ոգիներու յարձակումները եւ՝ ինչպէս վերը յիշատակուեցաւ՝ չար ոգիներու կը դիմադրէ Սրոշ: Ընդհակառակն՝ Իսլամէ՛ն (Սուրա 50) է ծագումը ուսերու վրայ երկու հրեշտակներու գաղափարին, որոնք մարդկան գործերը գրի կ'անցնեն: Մահմետական Պարսիկներու քով ուսերու վրայի երկու հրեշտակները — Րագիբ եւ Ատիդ — Հայոց քով[29] եղածներու պաշտօնը ունին: Մահմետական տեսութենէն ազդուած՝ Գրող–գրիչ կոչումը յետոյ նաեւ Սրոշի ժողովրդական ստուգաբանութեան մէկ ձեւը եղած է, բան մը, որ դիւրաւ տեղի կրնար ունենալ երկուքին լեզուական նմանութեան պատճառաւ. անձնաւոր Սրոշէն՝ անձնաւոր գրիչը եղած է, յետոյ նոյն իսկ բազմաթիւ (գրիչներ): Ստոյգ կարելի է համարել թէ Գրողի դէմքը նախիսլամական է, նոյնպէս միւս յետնախօսական տեսութիւններու կորիզը նախաքրիստոնէական ծագում ունի:

Ինչպէս որ ցարդ հայ ժողովրդական հաւատքէն յառաջ բերուած մանրամասնութիւնները իրենց էական կէտերուն մէջ պարսկական անդրշիրիմեան տեսութիւններուն կը համապատասխանեն՝ նոյնպէս ալ հոգւոյ դատաստանի տեսութիւնը՝ երկնքի դրան առջեւ: Աբեղեան եւ ուրիշներ[30] ընդարձակօրէն խօսած են ասոնց վերաբերեալ հայ եւ իրանեան տեսութիւններու միջեւ եղած սերտ աղերսի մասին: Հոս լոկ կ'ուզենք ակնարկել թէ մարդուն գործերը թէ՛ Հայոց եւ թէ՛ Պարսից քով արդարութեան կշիռքին վրայ կը կշռուին, որմէ վերջ հոգին դատաւորաց կամուրջէն կ'անցնի եւ իր գործերուն համեմատ դրախտը կ'երթայ կամ դժոխք (պահլ. դոշախուի) կ'իյնայ վարձատրուելու կամ պատժուելու համար — մանրամասնութիւններ, որոնք Իրանեանց կողմէ հոգւոյ դատաստանի նկարագրութեան ճշգրտօրէն կը համապատասխանեն[31]. միայն թէ մազի կամուրջի, իրանա-հայ դատաւորներու կամուրջի դատաստանը՝ Հայոց քով փոխանակ առանձնական դատաստանի՝ ընդհանրական դատաստանի ժամանակ տեղի կ'ունենայ[32]: Բնականաբար տարաձայնութիւն գոյութիւն ունի նաեւ հոգիներու դատաւորի մասին: Եթէ Իրանեանց քով Միհրն է գլխաւոր դատաւորը, քրիստոնեայ Հայոց քով Քրիստոս է, որ ծագող արեւուն վրայ դրած է իր գահը[33]:

Սրոշ-Գրողի նոյնութեան հարցը մօտ կը դնէ նաեւ ուրիշ՝ Ալիշանէն ու Չերազէն դժբախտաբար շատ համառօտիւ գծուած դէմքով մը, այն է՝ Շուտիկը: «Շուտիկ Յոնիայի Հայոց համար այն է, ինչ որ միւս Հայոց համար Գրողն է: Սա անոնց քով կ'արթնցնէ գաղափարը աստուածութեան մը Գրողէն աւելի՛ չոյտ եւ նուազ զզուելի[34]»: Ալիշան կ'աւելցնէ թէ Շուտիկ անունը հին բժշկական գրքերու մէջ «մահ» բառով կը ներկայացուի[35]: Թէեւ այս համառօտութեան մէջ կարելի չէ Շուտիկի մանրամասն գծերն ու գործերը խոշորացոյցի տակ դնել — ո՛չ Չերազ եւ ոչ ալ Ալիշան աղբիւր յիշած են — սակայն կարելի է, առանց մասնաւոր մտահոգութեան, այս պատկերը Գրողի քով զետեղել: Իսկ ինչ կը հայի Շուտիկ անուան՝ ան քիչ մը կը նմանի հին արաբական Սուրուշ-Սերուշ անունին:

Ուշադրաւ է ի վերջոյ այն պարագան որ հայ ժողովրդական հաւատքի մէջ Գաբրիէլ հրեշտակապետը յաճախ Գրողի տեղը կը բռնէ: Այս փոխանակութիւնը Փոքր-Ասիոյ կրօնքներուն համար կրնայ նշանակական համարուիլ: Հին արաբական աղբիւրներու մէջ Սրոշ՝ Սուրուշ-Սերուշ անունի տակ կ'ապրի:

[28] Ազգ· Հանդէս, Ա·, 318, 336· Բ. 186:
[29] Donaldson, անդ՝ էջ 79, 81:
[30] Աբեղեան, անդ՝ էջ 19: — Wilhelm, անդ՝ էջ 71:

[31] Ազգ· Հանդէս, Բ· 186· Ա· 318. Դ· 403: — Աբեղեան, Ա· գլ·: — Söderblom, անդ՝ էջ 92: — H. Hübschmann, Հայ Քեր·, էջ 142: — Դատական կամուրջը՝ շատ մը ժողովուրդներու քով մահմետական ժառանգութիւն է: — Scheftelowitz, անդ՝ էջ 180: — G. Nioradze, անդ՝ էջ 11:
[32] Ազգ· Հանդ·, Ա· 319, 336:
[33] Ե· Լալայեան, Ջաւախքի Բուրմունք. Թիֆլիս 1892, էջ 12: — Աբեղեան, անդ՝ էջ 19:
[34] Չերազ, անդ՝ էջ 266:
[35] Ալիշան, անդ՝ էջ 84:

Սուրուշ-Սերուշ կամ Ճեպրայիլ (Գաբրիէլ) կ'իշխէ կամ կը մարտնչի մոգերուն ու դեւերուն (ճին) հետ: Խաւարն ու ցուրտ հովերը կը փարատէ, կը մաքրէ աղբիւրները, կ'արթնցնէ աքաղաղները ու կը մղէ անասունները զուգաւորումի[36], — պաշտօններ, որոնք Պարսից քով ալ աւելի կամ պակաս Սրոշին կը վերագրուին (այս մասին այլուր): Այսօրուան Մանդեններու, այսինքն Միջագետքի եւ Իրանի բազմաթիւ իրանեան տարրներով մկրտչական աղանդաւորներու մասին կը հաւաստէ Drower թէ «Գաբրիէլ եւ Գաւրիէլ Իշլիհա ճշգրտօրէն կը համապատասխանեն Զրադաշտական Սրաոշայի[37]: Այս նմանութիւնը նաեւ լիրեւ հօգեւոր երեւան կու գայ այն պարագայէն որ այս աղանդաւորները Պարսիկներու պէս «Սրաոշայի արարողութիւնը կը կատարեն, ինչպէս կեանքի մէջ, նոյնպէս մահէն վերջ (այս արարողութիւնը կը կատարեն՝ հոգիի վերելքին օգնելու համար)[38]»: Հին մանդէեան աղբիւրներու մէջ Սաուրիէլի (Գաբրիէլ) քով կայ նաեւ Պաոնանկա (պարս. պատգամաւոր), բառ մը՝ որ սկզբնաբար Սրաոշայի համար կաղապարուած էր[39]:

Ամէն դէպքի մէջ շատ հաւանական է որ Գրող աղերսի մէջ է Սրաոշա-Սրոշի հետ*:

Dr. Joh. Hambroer, Wien.

Թարգմ. Հ. Ե. ՊՕՂՈՍԵԱՆ

[36] Decourdemanch ի գիրս Revue des Traditions populaires, Paris 1908, XXIII, 210.
[37] E. S. Drower, The Mandeans of Iraq and Iran. Oxford 1937, 203.
[38] Drower, անդ՝ 223: Առ այդ W. Brandt, Die mandäische Religion. Leipzig 1889, 82.
[39] Brandt, անդ՝ 73.
* Գրող առաջին անգամ կը յիշուի Ֆրիկէն (էջ 293).

Յարժամ մահն մօտենայ ու գրօղն գայ,
Ոչ ի ծեր կու խնայէ, ոչ ի մանուկ, ոչ յերեխայ...

Նոյնը ունի նաեւ Պլուզ վարդապետ «Երկուս ի մէկ տեղ բերած» տաղին մէջ (անդ, էջ 506):

Աշխարհս է կանանչ մարգեր,
մեք ի մէջն ենք կաքուու ձագեր,
Գրօղն է եղեր բազայ,
կու կրրէ մէկ մէկ զար ի վեր:

Ուրիշ մը՝ «Ես աչք եմ դու հոգի» տաղին մէջ (ան,, 528).

Այն քաղաքն, որ դու մըտնես,
Գրօղի ձայնիկ չի հասնի:
Ֆրիկ այլուր գրած է (էջ 482).
Գաբրիէլն երբ խնդիր կու գայ
հիւանդին լեզուն կու կապի:

ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՆԻԿՈՍԻԱՅԻ Ի ԿԻՊՐՈՍ

(ԱՅԺՄ ՓՈԽԱԴՐՈՒԱԾ ԱՆԹԻԼԻԱՍ, ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ)

Հին է հայ գաղթականութեան սկզբնաւորութիւնը Կիպրոս կղզւոյն վրայ: Գաղթականներու թիւը դարերու ընթացքին, մինչեւ մեր օրերը, կրած է մակընթացութիւն եւ տեղատուութիւն փոխն ի փոխն: Գաղթականները հաստատուած էին կղզւոյն այլ եւ այլ կէտերու վրայ: Ունէին անոնք իրենց եպիսկոպոսը, որուն աթոռանիստ էր, հաւանօրէն ի սկզբանէ հետէ, Նիկոսիա (Լեւքօշա, Լաւքօշա, Lewkosia)· ԺԴ· դարուն ընտիր դաս մը գաղթականներու կը յիշուի ի Մաղուսա (Ֆամագուստա), Կանչուոր Ս· Աստուածածին եկեղեցւոյ հովանւոյն տակ, որ «վանք» ալ կ'անուանուի: ԺԶ· դարու կէսին ձեռք բերին Հայերը Ս· Մակարի վանքը, որ յառաջ Ղպտիներուն կը պատկանէր:

Կը սպասուէր, որ այս գաղթականութիւնը պահպանած ըլլար իր ծոցը իր բազմադարեան կեանքէն յուշարձաններ, մշակոյթի հետքեր: Ինչ որ հասած է մեզի, շատ աղքատ է թուով: Անհետացած են հին ընտանիքները, կա՛մ ձուլմամբ տեղացի ժողովուրդներու հետ եւ կամ արտագաղթով: Արտագաղթած են նաեւ գրաւոր յիշատակարանները ըստ մեծի մասին: Իբր 70 ձեռագիրներէն, որոնք մնացած են հոն, հազիւ հինգը տեղւոյն վրայ գրուած են: Բայց կը գտնենք կղզիէն դուրս, այլ եւ այլ ձեռագրական հաւաքումներու մէջ ոչ խոտելի թիւ մը գրչագիրներու, որոնք Կիպրոս գրուած են:

Կիպրոս կղզւոյն եւ հայ գաղութի պատմութեան համար տեսնել՝

1. Բակուրան (Վահան Մ· Քիւրքճեան), Կիպրոս կղզի, Նիկոսիա 1903, էջք 122:

2. Արշակ Ալպօյաճեան, Կիպրոս կղզին. իր անցեալն ու ներկան. Թ է ո դ ի կ, Ամենուն տարեցոյցը, 1927 (Պարիս), էջ 192—254:

3. Բակ (Բաբգէն Ա· կաթողիկոս Կիւլէսէրեան), Հայ Կիպրոս. Հայ գաղութը եւ Ս· Մակար, Անթիլիաս 1936, էջք ԺԶ + 272:

4. Հ· Ն· Ակինեան, Հայ Կիպրոս, Հ ա ն դ է ս Ա մ ս օ ր ե ա յ, 1937, էջ 378—381:

Կիպրոսի ձեռագիրները 1920էն յառաջ երկու խումբով կը պահուէին Նիկոսիայի Առաջնորդարանին եւ Ս· Մակարի վանքին

© National Library of Armenia

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱԽՏԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ

Նոր	Հին	Մեծութիւն	Գիր	Տարի	Գրիչ	Տեղ	Բովանդակութիւն
1	3	33,7×22	բոլոր	ԺԴ·	Տիրատուր	անյայտ	Ճաշոց գիրք
2	2	33×24	"	1311	Ստեփանոս	Սիս եւ Հռոմկլա	Ցայսմաւուրք Կիր· Արեւելցւոյ
3	1	41,3×27	"	1684	Թումա	Երուսաղէմ եւ Կիպրոս	" Գր· Խլաթեցւոյ
3 ա	66	34×25	"	1678	Յովհաննէս	Կ· Պոլիս	" " "
4	4	33,5×25	"	ԺԳ/ԺԴ	Ստեփանոս	Սուլծե գիւղ (?)	Ճառընտիր-Ցայսմաւուրք
5	11	29,2×20,4	"	ԺԷ	Արիստակէս	անյայտ	Վարք Հարանց
6	14	21,2×15	նոտր	1616	Կարապետ	Թոխաթ	Հարանց վարքի մասեր
7	17	21,4×15	"	ԺԸ	անյայտ	անյայտ	Հայելի վարուց
8	40	17,4×13,1	բոլոր	ԺԴ	"	"	Հաւաքածոյ
9	22	20,5×15	"	ԺԵ/ԺԶ	"	"	Մեկնութիւն Ցայտնութեան եւ Դանիէլի
10	29	21,5×15,7	նոտր	1673	Միքայէլ	Խոզի դղեակ	Խմբագիր Մեկնութիւն Թղթոյն Պաւղոսի
11	44	16,8×11,5	բոլոր	ԺԳ	անյայտ	Ձորոյ բերդ	Սարգսի Մեկնութիւն կաթողիկէ Թղթոց
12	55	15,1×10,6	"	ԺԵ	"	անյայտ	Քաղուածք ի Սարգիս-գրոց
13	37	17,7×13,1	"	ԺԵ	"	Երզնկա (?)	Կիւրղի Գիրք Պարապմանց
14	36	18,2×13,1	"	"	Խաչատուր (?)	անյայտ	Գր· Տաթեւացւոյ Լուծմունք Պարապմանց
15	43	16,4×12,4	"	"	Յովհաննէս	"	Գր· Տաթեւացւոյ Մեկնութիւն Մատթէի
16	35	17,3×13,1	"	"	անյայտ	"	Գր· Տաթեւացւոյ Մեկնութիւն Յովհաննու
17	45	15,9×11,5	"	"	Նիկոլ	"	Գր· Նարեկացւոյ Ողբերգութիւնք
18	20	21,7×14,5	նոտր	1418 էն յառաջ	անյայտ	"	Թովմայ Ագուլեցւոյ Ցազագս խորհրդոց
19	18	21×15	"	ԺԸ	"	"	Գիրք Մոլութեանց եւ Ֆր· Մարթինի Պատմ· Կայսերաց
20	32	21,1×15,2	"	1652	-	"	Գիրք Առաքինութեանց եւ Մոլութեանց
21	28	20×14,3	"	1690	Ղուկաս դպիր	Էջմիածին (?)	Դաւթի եւ այլոց վերլուծութիւնք
22	19	21×15,3	"	ԺԸ	անյայտ	անյայտ	Առաքել Սիւնեցւոյ Մեկն· Սահմանաց
23	31	20,3×14,4	նոտր-շղագիր	1856	Զանազանք	Եգիպտոս	Առաքել Թոքիրտաղեցւոյ Քարոզք
24	16	24,5×16,8	բոլոր	1307	Պետրոս երէց	Երզնկա	Ոսկեփորիկ
25	46	16,1×11	"	1528	Թադէոս երէց	Սեբաստիա	Ոսկեփորիկ
26	52	15,6×10,6	նոտր	1506 (?)	Գասպար	անյայտ	Հաւաքածոյ
27	63	14,5×10,4	բոլոր	ԺԶ	անյայտ	"	"
28	21	20×14,3	"	ԺԷ	Յովհաննէս	"	Ժողովածոյ
29	61	11×8	"	1620	Իսրայէլ	Կ· Պոլիս	Սաղմոսարան
30	10	27×20,5	"	1650	Տօնապետ դպիր	Զմիւռնիա	"
31	57	13,3×10,3	"	ԺԷ	Մարգար (?)	անյայտ	"
32	58	13,6×10,3	"	"	Դաւիթ որդի	"	"
33	8	30×21	"	1740	Աստուածատուր երէց	Կեսարիա	"
34	12	23×16	երկաթագիր	Թ—Ժ	Գրիգոր	անյայտ	Աւետարան
35	41	20,6×14,5	բոլոր	1293	անյայտ	Սիս	Նոր Կտակարան
36	38	18,2×13	"	1454	Գրիգոր քահանայ	անյայտ	Աւետարան
37	15	23,6×16	"	ԺԴ	անյայտ	"	"
37 ա		անյայտ	"	1623	Ստեփանոս	"	"
38	24	19,1×13,9	"	1674	Ստեփանոս	Լաւքօշա	"
39	33	20,2×14,1	"	1676	"	"	"
40	23	20×14,3	"	1677	"	-	"
41	62	10,6×7,5	նոտր	ԺԷ	անյայտ	անյայտ	Աւետարանացոյց· Տօնացոյց
42	42	18×13,2	բոլոր	1468	Յակոբ քահանայ	Խարբերդ	Մաշտոց
43	39	18×13,2	·	ԺԵ	անյայտ	անյայտ	Մաշտոց-Գանձարան
44	25	25×14,4	"	ԺԵ/ԺԶ	Յովհաննէս	Եդամ (?)	Մաշտոց
45	13	23,2×16	"	1539	Գաբրիէլ դպիր	Քուսաշենար	Մաշտոց-Գանձարան
46	53	5,6×10,7	նոտր	ԺԷ	անյայտ	անյայտ	Մաշտոց
47	49	16,4×11,5	բոլոր	1335	Սարգիս	Զուրչկայ գիւղ	Մաշտոց ձեռնադրութեան
48	30	20,9×15,6	նոտր	1591	Աստուածատուր եւ Մինաս որդ·	Ամասիա	"
49	56	14,8×10	բոլոր	1623	Մկրտիչ	անյայտ	Քահանայաթաղ
50	64	16×10,5	նոտր	1747 էն ետքը	անյայտ	"	Մաշտոց Լեհահայոց
51	51	13×10,4	բոլոր	ԺԴ	"	"	Շարակնոց
52	60	11,5×9,2	բոլոր	ԺԵ	Հայրապետ աբեղայ	Աղթամար (?)	"
53	54	15×10	նոտր	1664	անյայտ	անյայտ	"

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱԽՏԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ

Նոր	Հին	Մեծութիւն	Գիր	Տարի	Գրիչ	Տեղ	Բովանդակութիւն
54	9	30×20,7	բոլոր	1670	Յովհաննէս եպ·	Կիպրոս	Շարակնոց
55	26	20,3×14,1	նոտր	1674	" "	Լաւքօշա	"
56	47	15,6×10,7	բոլոր	ԺԷ	Մաղդասի	անյայտ	"
57	50	15,3×10,5	նոտր	"	անյայտ	"	"
58	59	15,5×10,7	"	"	-	"	"
59	48	17,8×12,6	բոլոր	ԺԴ	Սիմէոն	"	Գանձարան
60	27	17,7×14	-	1437	Կարապետ աբեղայ	Տփխիս	"
61	34	20,6×15,2	"	1560էն յառաջ	Յովհաննէս եպ· Ակնայեցի	Սիս (?)	"
62	5	32,5×23	նոտր	1773	Մարտիրոս արքեպ·	Երուսաղէմ	Հուշակ Երուսաղէմի
63	6	32,4×22,3	"	1776	"	Կիպրոս (?)	" "
64	7	32,2×22	"	1773	"	Երուսաղէմ	" "

ՄԱՍՆԱՒՈՐՆԵՐՈՒ ՔՈՎ

ՓԻԼԻՊՊՈՍ ՄԻԽԹԻՎԼԵԱՆ, ՖԱՄԱԳՈՒՍՏԱ

1		18×13,5	բոլորգիր	1583	Ստեփանոս Հէծրցի	Ֆոնուզ (?)	Գանձարան
2		23,6×17	նոտրխշղագիր շղագիր	1833	Յակոբ Տամապետեան	Էվէրէկ	Ուրբաթագիրք-Վեցհազարեայ

ՊԱՂՏԱՍԱՐ ՆՇԱՆԵԱՆ, ԼԱՌՆԱԿԱ

3		29,3×20,4	շղագիր	1932	Պ· Նշանեան	Լառնաքա	Իմաստասիրականք

ԱՐՄԷՆ ԿԵՍԱՐԵՆՑ, ՆԻԿՈՍԻԱ

4		27,5×18	բոլորգիր	1565	անյայտ	անյայտ	Աւետարան

ՊՕՂՈՍ ԳԷՈՐԳԵԱՆ, ՆԻԿՈՍԻԱ

5		14×10	բոլոր	1641	Միքայէլ Թոքաթցի	Կ· Պոլիս	Շարակնոց

© National Library of Armenia

մէջ: 1921/2ին միացուց այս երկու խումբերը Առաջնորդարանին մէջ Սարաճեան Պետրոս Սրբազան (ապա Կաթողիկոս): Իսկ ապա 1951ին Յովսէփեան Գարեգին Ա· կաթողիկոս փոխադրեց այս ձեռագիրները (թուով 65) Անթիլիաս, Կաթողիկոսարանի Մատենադարանը:

Նիկոսէայի Առաջնորդարանի նախկին Հաւաքումը կը բովանդակէր 26 ձեռագիր, ինչպէս կը տեղեկանանք Հ· Վրթանէս Վ· Եպսեթճեանի, Վիեննական Մխիթարեանի կազմած մէկ Ցուցակէն, որ 15 օգոստոս 1856 թուականը կը կրէ: Այս ձեռագիրներն են·

1 (32)	Գիրք յաղագս Առաքինութեանց	13 (34)	Գանձարան
2 (22)	Մեկնութիւն Ցայտնութեան Յովհաննու	14 (16)	Ռսկեփորիկ
		15 (35)	Լուծմունք Յովհաննու
		16 (48)	Գանձարան
3 (18)	Գիրք յղ· Մոլութեան	17 (43)	Լուծմունք Մատթէի
4 (64°)	Մայր Մաշտոց փոքրագիր	18 (49)	Մաշտոց ձեռնադրութեան
5 (11)	Վարք Հարանց (սկիզբէն պակաս)	19 (40)	Հաւաքածոյք
6 (46)	Ռսկեփորիկ	20 (29)	Մեկն· Թղթոյն Պաւղոսի
7 (30)	Մաշտոց	21 (12)	Աւետարան
8 (14)	Վարք Հարանց	22 (42)	Մաշտոց
9 (63)	Յայսմաւուրք (յամէ 1678)	23 (44)	Սարգսի Մեկն·Կաթողիկեայ Թղթոց
10 (4)	Յայսմաւուրք	24 (21)	Ժողովածոյք
11 (36)	Լուծմունք Պարապմանց	25 —	Աւետարան 1631էն
12 (13)	Մաշտոց	26 (41)	Աւետարան

Թ· 25 Աւետարանը, որ գրուած է 1631ին, կը պակսի այժմ:

Ասկէ կարելի է հետեւցնել, թէ մնացեալ 40 ձեռագիրները կը պատկանէին Ս· Մակարայ վանքին· ասոնք են·

1 Յայսմաւուրք	(1)	22 Գիրք Պարապմանց	(37)
2 Յայսմաւուրք	(2)	23 Աւետարան	(38)
3 Ճաշոց	(3)	24 Մաշտոց	(39)
4 Հոչակ	(5)	25 Գր· Նարեկացի	(45)
5 Հոչակ	(6)	26 Շարակնոց	(47)
6 Հոչակ	(7)	27 Շարակնոց	(50)
7 Սաղմոս	(8)	38 Շարակնոց	(51)
8 Շարական	(9)	29 Հաւաքածոյ	(52)
9 Սաղմոս	(10)	30 Մաշտոց	(53)
10 Աւետարան	(15)	31 Շարակնոց	(54)
11 Հայելի վարուց	(17)	32 Սարգսի Քառուածոյք	(55)
12 Ան· Սիւնեցւոյ Լուծմունք	(19)	33 Քահանայաթաղ	(56)
13 Թովմ· Ագուինացի	(20)	34 Սաղմոս	(57)
14 Աւետարան	(23)	35 Սաղմոս	(58)
15 Աւետարան	(24)	36 Շարակնոց	(59)
16 Մաշտոց	(25)	37 Շարակնոց	(60)
17 Շարակնոց	(26)	38 Սաղմոս	(61)
18 Գանձարան	(17)	39 Աւետարանացոյց	(62)
19 Դաւիթ Անյաղթ	(28)	40 Հաւաքածոյք	(63)
20 Քարոզգիրք	(31)	41 Սաղմոս	(65)
21 Աւետարան	(33)		

Փակագծի մէջ առնուած թիւերը կը համապատասխանեն «հին թիւերու»:

Այս ձեռագիրներու համառօտ ցուցակը կազմած են 1921ին Սերովբէ Վ· Սամուէլեան եւ Դկտ· Ն· Թագւորեան, զոր ապա ֆրանսերէն թարգմանութեամբ հրատարակեց F. Macler, Ile de Chypre. Notices de manuscrits arméniens: Revue de l'Orient chrétien 23 (1922—1923) 172—198.

Դկտ· Ն· Թագւորեան երկրորդ ցուցակ մ'ալ կազմած է ի խնդրոյ Հ· Մ· Պոտուրեանի, գլխաւոր ուշադրութիւնը դարձնելով ձեռագիրներու Յիշատակարաններուն, զորոնք արտագրած է: Այս «Ցանկ եւ ծանօթութիւն հայկական ձեռագրաց Նիկոսիոյ եկեղեցւոյն որ ի Կիպրոս» ամփոփուած է երեք պրակներու մէջ, որոնց երկու վերջինները տրամադրած է ինձ Հ· Պոտուրեան· անոնք կը պարունակեն Թ· 9—65 ձեռագիրները: Պակաս թիւերն են Թ· 3, 9—11, 15, 13, 39, 41:

Ձեռագրացս Յիշատակարաններէն մեծ մաս մը հրատարակած են Քիւրքճեան եւ Կիւլէսէրեան իրենց վերոյիշեալ աշխատասիրութիւններուն մէջ:

Այս ձեռագիրներու բովանդակութիւնը ի մերձուստ ուսումնասիրելու համար Կիպրոս հասայ 1939 ապրիլի վերջերը եւ դադար առի հոն երեք շաբաթ: Առաջին գործս եղաւ համարագրել ձեռագիրները մեծութեան կարգով: Ընդ ամէնը 65 ձեռագիր: Ապա ցոյց տուին ինձ 66երորդ մը՝ մագաղաթեայ Յայսմաւուրք գրուած 1678ին: Կարեւոր համարեցայ մի առ մի ցուցակագրել այս ձեռագիրները: Ցուցակագրեցի Թ· 1—23· հարկ էր ընդհատել աշխատանքս· մեկնեցայ Բէյրութ: Երկրորդ անգամ Կիպրոս այցելեցի 1945, յունիս 13ին, շարունակելու համար ցուցակագրութիւնս, զոր ի գլուխ հանեցի օգոստոս 13ին: Երկու ձեռագիր, Թ· 65 եւ 66 հնարաւոր չեղաւ տեսնել երկրորդ այցելութեանս:

Մակլէրի հրատարակած Ցուցակը ընդհանրապէս կը համընթանայ իմ կարգիս: Նոր են հոն Թ· 7 «Քարոզգիրք Ց· Նալեանի» (եթէ նոյն չէ իմ Թ· 31 Քարոզգիրքին հետ, որուն հեղինակն է Առաքել Թէքիրտաղցի) եւ Թ· 59 «Վարք սրբոց», 1663էն· որ կը պակսի նաեւ Դկտ· Թագւորեանի ցանկին մէջ:

Իմ ցուցակս կազմած էի ձեռագիրներուն մեծութեան կարգով: Այժմ երբ տպագրութեան կու տամ զայն, պատշաճ համարեցայ զանոնք նոր դասաւորութեան ենթարկել, ըստ բովանդակութեան, հետեւեալ բաժանումներով·

Ա· Ճաշոց, Յայսմաւուրք· Ճառընտիրք·
Բ· Հարանց Վարք·
Գ· Մեկնողականք·
Դ· Իմաստասիրականք·
Ե· Ժողովածոյք·
Զ· Սաղմոսարանք·
Է· Աւետարանք·
Ը· Մաշտոցք·
Թ· Շարականք·
Ժ· Գանձարանք եւ Տաղարանք:

Իւրաքանչիւր ձեռագրին առընթեր նշանակած եմ նախկին թիւերը «հին թիւ» անուանակոչութեամբ:

1.

ՃԱՇՈՑ ԵՐՈՒՍԱՂԵՄԵԱՆ

Հին Թիւ 3· ԺԴ· դար:

ԹՈՒՂԹՔ՝ 553: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33·7 × 22 հմ·: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չկայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ լաւ: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԽՈՐԱՆ՝ չունի: — ԿԻՍԱԽՈՐԱՆ՝ միագոյն: — 1ա, 71բ, 322բ, 335բ: — ՆԿԱՐ՝ չկայ: — ԶԱՐԴԱԳԻՐՔ՝ միագոյն բայց գեղեցիկ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ բազմաթիւ: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ ԺԴ· դար: — ՏԵՂԻ՝ անծանօթ: — ԳՐԻՉ՝ Տիրատուր:

Մատեանս է Ճաշոց· գլխաւոր բաժանումները կիսախորաններով, գրեթէ նոյն Վիենն· 5 ձեռագրին հետ (Ցուց· 19—20): Կը սկսի՝

Թղ· 1ա· «Եւ հովիւք էին ի տեղւոջն յայնմիկ···: Յետ այսորիկ ելանեն ի հովանոցէ ի սուրբ Բեթղէէմ· եւ ժողովին ի սուրբ Սիոնն···:

Թղ· 16բ—20բ· Աւրհնութիւն Ջրոյս, զոր ասացեալ է տեառն Բարգղի եպիսկոպոսի Կեսարու Կապա·: Աղաւթք՝ Տէր ամենակալ յամենայնի հզաւր···:

Թղ· 177ա· Կանոն մեծի Եշ· Ռտնլուային, զոր արարեալ սրբոյն Եփրեմի (Վիենն· 5, 94ա):

Թղ· 282բ· Թուղթ Կիւրղի Երուսաղէմացւոյ առ Կոստանդիանոս արքայ վասն երեւելոյ նշանի սուրբ Խաչին յերկնից···:

Թղ· 542բ· Հանգիստ երանելւոյն Յովհաննու (Վիենն· 5, 418ա):

Թղ· 548ա (վերջ)· Ցայտնութեան պահոցն Ա—Զ աւուրք:

Յիշատակագրութիւնք· 1· Բուն յիշատակարանի սկիզբը միայն մնացած· Թղ· 552բ· «փառք ամենազաւր ամէնիմաստ ամէնատատ Հաւր···: Արդ աւրհնեսցի յարդարութիւն հաստատեալ··· (վերջ) այլ եկայք առ |||, Շարունակութիւնը ինկած, ուստի նաեւ թուականն եւ գրչութեան տեղը կորսուած:

2· Թղ· 322բ·

Ցայս հրաշափառ մեծի տանիս,
Քեզ երանի որ հանդիպիս
լուսափթիթ բուրաստանիս,
հոգիարուղխ սրբոյ տաւիս,
երբ լի սրտաց ծունր կրկնես,
սիրով հոգւոյն յԱստուած հպիս,
յորժամ յիշես դու զեղկելիս,
զՏիրատուր գծող գրիս,
զմեղաւք ծածկեալս ի մէջ տղմիս:

Քրիստոս Աստուած ի քո միւսանգամ գալստեանդ ողորմեա հաւրն իմոյ Սարգսին եւ մաւրն իմոյ Քաղաքիային (ա'յսպէս) եւ եղբարցն իմոց: Եւ զեղբայրն իմ զՄկրտիչ կրաւնաւորն եւ զիմաստուն բանի սիրողն:

3· Թղ· 282ա· Զպարոն Ճուանն յիշեցէք ի Տէր, ընդ նմին եւ զմեղօոր հողս:

4· Թղ· 552ա· Քրիստոսի ՌԾԼԵ (1535)· ամի ես Լիվոն աւագ իրէց զբրօվիլիճն սուրբ Բարսեղայ եւ այլ թուղթ մի սպիտակ գրած ի տանուտրաց ձեռն պր· Կիրակոսին եւ պր· Ծիէ· եւ եսուր պր· Հազարապետն զԲրօվիլիճն սուրբ Բարսեղայ:

5· Թղ· 335ա· Զրագում բարեաց պատճառն եւ գերախտաւոր սրբոյ եկեղեցւոյս զաւագ սարկաւագ եւ զմղտեսի Բարղամն յիշեցէք ի Քրիստոս յաղօթս մշտանուէրս, հարք եւ եղբարք մեր համակարիք, որք ուղեւորեալք հետեւիք զկնի հետոց մերոց: Քանզի այս մակագրեալ Բարղամս որպէս զօրեղ ախոյեան մտեալ ի հանդէս եւ էառ զանձամբ իւրով զամենայն հոգ եւ զծանրու—

© National Library of Armenia

թիւն եկեղեցւոյս. եւ եա նորոգել գեղեցիկ եւ վայելուչ յօրինուածով, օգնականութեամբ եւ տրովք ամենայն ժողովրդոց վաճառականաց եւ քաղաքացեաց, որոց Աստուած ամենայնի հատուսցէ բազմապատկաբար: Եւ գոյին ի ժամանակին յայնմիկ ի վանս սրբոյն Մակարայ Յոհաննէս վարդապետն, որ էր եկեալ ի Թոխաթոյ, եւ տէր Սարգիս կուսակրօն քահանայն հանդերձ եղբարբք ոմամբք. որք զաղօթս իւրեանց միշտ նուիրէին ի պահպանութիւն ամենայն աշխարհի: Գրեցաւ սակաւ յիշատակարանս ի ՌՃԺ եւ Է (1668) թվ. յորում ամի եւ նորոգումն տաճարիս եղեւ:

6. Բակ, Հայ-Կիպրոս, էջ 183—184 ի մէջ կը բերէ հետեւեալը, զոր ես չեմ տեսած. «Ճաշոց մը բոլորգիր, որուն բուն Յիշատակարանին պատմական մասը կորզուած է, եւ որ նոր նորոգուած է ՌՃԻԸ = 1679ին Վարդան վարդապետի մը ձեռքով, կը բովանդակէ Նիկոսիոյ Ս. Աստուածածին Եկեղեցւոյ նորոգութեան Յիշատակարանը, որ գրուած է Յարութեան Կանոնին սկիզբը, դատարկ թղթի վրայ.

«Կամօք եւ նախախնամութեամբ գերալի եւ համարուն սրբոյ Երրորդութեանն նորոգեցաւ տաճարս չքնաղակերտ, որ յանուն սուրբ Աստուածածնին, յամի հազարերորդի հարիւրորդի յեօթն եւ Ժ.երորդի թուին Հայոց (ՌՃԺԷ = 1668), հոգաբարձութեամբ եւ ստարութեամբ միահաղոյն ամենայն քրիստոսադաւան ժողովրդոց կայացելոցն ի քաղաքիս Լուքօշա, բնակաց եւ եկաց, արուեստաւորաց եւ վաճառականաց, ընչեղաց եւ ոչ նոյնպիսեաց, որք ջերմեռանդ սիրով եւ մեծաւ հաւատով դիմեցին ի հանդէս նորոգման սրբոյ տաճարիս. եւ ըստ իւրաքանչիւր չափոյ եւ կարողութեան ետուն գնուէրս իւրեանց ի շինութիւն եւ ի նորոգութիւն սորին: Իսկ յորդորիչք եւ վերակացուք այսմ գործոյ Ովանէս եպիսկոպոս, տեսուչ եւ առաջնորդ քաղաքիս. եւ վարդապետ ոմն անուն Թումա, որ էր եկեալ ի կողմաց արեւելից. եւ նա եւս ըստ կարեաց իւրոց աշխատեցաւ եւ ջանաց ամենայն զօրութենէ, յորդորելով եւ վառելով զժողովուրդն յայս իրողութիւն: Բայց սակայն մեծագոյն եւ պատճառ եւ կատարիչ այսմ գործոյ, մշակն արութեան եւ ջատագովն հաւատոյ, Մղտեսի Բարդամն գոլով ի քաղաքէս Լուքօշայու եւ յատուկճան աւագ սարկաւագութեան, որ յամենայն անձնէ արիաբար հոգայր զամենայն ծանրութիւն այսմ շինութեան, եթէ ի դրունս ռնաւորաց եւ մեծամեծաց դեգերելով եւ կամ զշինողաց եւ զվաստակաւորաց զթիւ եւ զհամար պահելով, եւ ըստ իւրաքանչիւր սակի տալով զվարձս նոցա. որոյ յամենեցունց արարչէն լիցի հատուցումն ըստ հոգւոյ եւ ըստ մարմնոյ. ամէն:

Եւ էին յաւուրսն յայնոսիկ քահանայք եկեղեցւոյս տէր Ստեփաննոս եւ տէր Յակոբ:

Ուստի քահանայապետն ամենայնի Տէրն մեր Յիսուս Քրիստոս ընկալցի գնուէրս եւ զաշխատանս սոցա եւ պահեսցէ զսուրբ տաճարս հաստահիմն խաղաղութեամբ ամենայն ժողովրդովք մեծամեծօք եւ փոքումբք. եւ զկնի զատոխս լքանելոյն՝ արժանի արասցէ իւրոյ անվախճան փառացն եւ ուրախութեան. ամէն: Հայր մեր որ»:

Յիշատակարանիս հեղինակը կ՚երեւայ թէ Թումա վարդապետն է:

7. Թղ. 552ա. Եւ Երուսաղէմէ տէր Մատթէոսի որդի տիրացու Իսկանտ(ա)րն յիշատակ է: Գրեցաւ գիրս Կիպրոս թվին ՌՃՂԹ (1740):

8. Թղ. 335ա (Նոտրագիր). Թվին ՌՃՂԳ (1744) ապրիլի ԻԵ, օրն զայտիկի կիրակի. գրէցաւ գիրս տիրացու Յարութին:

9. Թղ. 552ա. Գրէցաւ գիրս տիրացու Յարութին ի բարին. ամէն:

10. Թղ. 1ա (Նոտրագիր). Գրիգոր գրէ ՌՄԷ (1758):

11. Թղ. 552ա. Խօճայ Օվակիմն. գիրեցաւ գիրս. տիրացու Գրիգորս գրէցի. ամէն: Զոր Տէր Աստուած հայզպյրապայտիկ եւ բիւրայ պատիկ պարգեւեսցէ վարց փոխայրէն սաս եւ ի հանդերձելումն եւ դուք: Խօճայ Ավակիմն. գրէցաւ գիրս տիրացու Յարութենէ գրէցե:

12. Թղ. 553բ. Գրեցաւ գիրս մահտեսի Օվակիմի որդի տիրացու Սարգիս գրէց եւ մուհրէցի (կնիք՝ Քրիստոսի ծառայ Սարգիս). ամէն:

13. Թղ. 553բ. Գրեցաւ գիր մահտեսի Օվակիմի որթի տիրացու Սարգիս գրէցի. ամէն:

14. Թղ. 553ա. Գրէցաւ գիրս Հաննայ որդիյ տիրացու Յովսէփ գրէցի. ամէն:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

1. Ձեռագրիս գրիչը թերեւս նոյն ըլլայ 1291ին «յաշխարհակալութեան ազգին Նետողաց, որ Արղուն անուն ճանաչիւր» ծաղկած Տիրատուր գրչին հետ, որ գրած է Գր. Նարեկացւոյ Ողբերգութիւնը (Համամճեան, Ցուց. Գաղատիոյ, Թ. 81) եւ Աւետարան մը Հեթում Պլուզ երէցի համար (Թորոս Աղբար, Ա., էջ 57—67): Ձեռագիրս թէեւ անթուական է, բայց Հեթում Պլուզ կը յիշուի 1297 (Սարգիսեան, Ցուցակ, Բ., էջ 486):

2. Թ. 2 Յայսմաւուրքի մէջ կը գրէ Թոմաս բանասէր, թէ «եւ երրորդ թուական զտաք, որ է ի սկիզբն ճաշու գրոցն, եղեալ ի Դաւիթ եպիսկոպոսէ ումեմնէ յՋՈԳ թվ.»: Այսպիսի յիշատակագրութիւն չտեսայ ես ճաշոց գրքի մէջ:

3. Յիշուած Թոմասը առանց տարակուսի համանուն բազմաշրջիկ Վանանդեցին է:

2.

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ ԿԻՐԱԿՈՍ ԱՐԵՒԵԼՑԻՈՅ

Հին 2. ՁԿ = 1311

ԹՈՒՂԹՔ՝ 726: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 33 × 24 հմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չկայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ընդհանրապէս լաւ: — Տեղ տեղ՝ թղթերու, եռեւառաջութիւն, նաեւ թղթերու անկում. վերջին կազմողը ինչ ինչ լրացուցած է (հմմտ. թղ. 1—3, 195—196, 216—217, 328—331): — ԴԱՏԱՐԿ՝ թղ. 1—2ա, 724բ, 725բ—723բ: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԽՈՐԱՆ՝ չկայ: — ԿԻՍԱԽՈՐԱՆ՝ թղ. 4ա, 42ա, եւ այլն. միագոյն: — ԶԱՐԴԱԳԻՐՔ եւ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ միագոյն, նաշակաւոր: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1291—1311: — ՏԵՂԻ՝ Սիս եւ Ճոխարու վանք: — ԳՐԻՉ՝ Ստեփաննոս:

Մատեանս է Յայսմաւուրք Կիրակոս Արեւելցւոյ, որուն օրինակութիւնը սկսած է սկզբնագրէն 22 տարի եաքը. եւ կը թուի ինձ թէ օրինակս Յայսմաւուրքի այս խումբի ծանօթ հնագոյն օրինակն է: Այս պատճառաւ կարեւոր կը համարիմ Նաւասարդ ամիսն ամբողջութեամբ ցուցակագրել, դիւրութիւն ընծայելու համար հետաքրքրուողներու, համեմատելու զայն ուրիշ օրինակներու հետ:

1. Թղ. 4ա. Նաւասարդի ամսոյ ի Ա. եւ Աւգոստոսի ԺԱ: Տաւն է Յովաննու Կարապետին զոր կարգեաց սուրբն Գրիգոր Հայոց Լուսաւորիչ յԱշտիշատ գաւառի: Սուրբն Գրիգոր լուսաւորեաց զաշխարհս Հայոց աստուածգիտութեամբ եւ դարձան մարդիկ ի մոլորութենէ կռոցն...:

2. Թղ. 5ա. Յայսմ աւուր վկայութիւն սրբոցն Քսեստոսի Հռովմայ հայրապետի եւ Լաւռենտիոսի նորին սարկաւագի: Սոքայ էին յաւուրս Դեկոսի ամբարիշտ արքային: Քսեստոս Աթենացի էր...:

ա. Թղ. 6բ. Յայսմ աւուր տաւն է եւ Գալլիտոսի: Ցո. Տարինոսի եւ տի Բուրցի:

3. Թղ. 6բ. Նաւ. Բ. = ԺԲ Աւգ.: Վկայութիւն սրբոցն Անիկտիոսի եւ Փոտիոսի: Այսմ սրբոցս մարտիրոսութիւնս եղեւ այսպէս: Դիոկղետիանոս անաւրէն արքայն գնաց ի Նիկոմիդիայ քաղաքն...:

4. Թղ. 7բ. Նաւ. Գ. = ԺԳ. Աւգ.: Յիշատակ սուրբ հայրապետացն Հայոց Գրիգորիսի Վկայասէրի եւ Գրիգորի եւ Ներսէսի Երգեցողի: Սուրբ հայրապետքս այս էին յազգէ սրբոյն Գրիգորի... (չար. Թղ. 11ա):

5. Թղ. 9ա. Յայսմ աւուր վկայաբանութիւն Մարկոսի եպիսկոպոսի Ապամիոյ Ասորոց: Երանելին Մարկեղոս էր ի Կիպրոսէ...:

ա. Թղ. 9ա. Յայսմ աւուր տօն է Մարիամու մաւրն Ստեփանոսի Ուռնեցոյն: Եւ Է. կուսանացն: Ցո. Իպողիտի եւ Ընկերացն եւ Մաքսիմոսի խոստովանողի:

6. Թղ. 9բ. Նաւ. Դ. ԺԴ. Աւգ.: Նաւակատիք մեծ եկեղեցւոյն որ ի Վաղարշապատ սուրբ Կաթողիկէին եւ Շողակաթին: Առաքելաշնորհ եւ սքանչելագործ այրն Աստուծոյ սուրբն Գրիգոր...:

7. Թղ. 9բ. Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Հռիփսեայ եւ Փիլդեայ, Իդեայ: Սոքա ազգականք էին չորից գինուորացն...:

8. Թղ. 10ա. Յայսմ աւուր վկայութիւն Յուրկինոսի: Քրիստոսի մարտիրոսն Ուրկինոս էր ի Սեբենդւոյ... (չար. Թղ. 12ա):

ա. Թղ. 12ա. Յայսմ աւուր Ցո. Եւսեբէոսի:

9. Թղ. 12ա. Նաւ. Ե. = ԺԵ. Աւգ.: Փառաւորեալ Ննջումն ամենասրբուհւոյ Աստուածածնին Մարիամայ: Պարտ եւ արժան է գիտել...:

ա. Թղ. 16ա. Ցո. նոյնս է: Յայսմ աւուր տաւն է Պանտալեոնի բժշկի եւ հաւր իւրոյ Եւստորգէոսի եւ այլոց վկայիցն:

10. Թղ. 16ա. Նաւ. Զ. = ԺԶ. Աւգ.: Վերստին տաւն Փոխման Աստուածածնին եւ սուրբ Դաստառակին Քրիստոսի, որ առաքեցաւ Աբգարու թագաւորի: Թագաւորն Հայոց եւ Ասորոց Աբգար...:

11. Թղ. 17բ. Յայսմ աւուր վկայութիւն Դիոմեդեա բժշկի: — Քրիստոսի վկայն Դիոմեդոս էր ի Տարսոն քաղաքէ...:

© National Library of Armenia

ա. Թղ. 18ա. Յայսմ (աւուր) գիւտ սուրբ Կիւռամետին յՈւռհա, որ նկարել էր ի Դաստառակէն ի կիւռամիտն պատկերն Քրիստոսի, զոր առեալ մուծին ի Կոստանդինուպաւլիս: Ծն. Անտոնիպոսի վկայի:

12. Թղ. 18ա. Նաւ. Է.=Աւգ. ԺԷ.: Վերստին տաւն է Ննջման Աստուածածնին: Եւ յայսմ աւուր վկայութիւն սուրբ Միւռոնա քահանայի: Յաւուրս Դիկիոսի ամբարիշտ արքային էր սուրբն Միւռոն քահանայն...:

ա. Թղ. 19ա. Յայսմ վկայութիւն Ստեփանոսի Ուլնեցոյն, Եւստրատինի կուսի եւ Փիլիպոսի: Յայսմ արեգակն ի կոյսն մտանէ:

13. Թղ. 19ա. Նաւ. Ը.=Աւգ. ԺԸ.: Նոյն տաւն է Ննջման Աստուածածնին: Եւ վկայութիւն Լաւրիոսի եւ Փլա(ւ)րիոսի (եւ Ստեփանոսի Ուլնեցւոյն) եւ նորին ընկերացն: Վկայն Քրիստոսի սուրբն Ստեփաննոս էր ի ժամանակս ուրացողին Յուլիանոսի...:

14. Թղ. 19բ. Յայսմ աւուր վկայութիւն սրբոց վկայիցն Լաւրիոսի, Փլաւրիոսի: Փառաւորեալ վկայն Քրիստոսի Լաւրոս եւ Փլաւրոս եղբարք էին երկուորեակք...:

ա. Թղ. 21բ. Ծն. Ագապիոսի մարտիրոսի:

15. Թղ. 21բ. Նաւ. Թ.=ԻԹ. Աւգ.: Վերստին տաւն Աստուածածնին: Եւ վկայութիւն սրբոց Ատոմեանցն Հայոց իշխանացն: Սուրբ Ատոմ մեծ իշխան էր Հայոց...:

16. Թղ. 22բ. Յայսմ աւուր վկայութիւն սրբոյն Անդրէի եւ զաւրաց իւրոց: Քրիստոսի վկայն Անդրէաս ստրատելատն...:

17. Թղ. 24ա. Նաւ. Ժ.=Ի. Աւգ.: Տաւն Ննջման Աստուածածնին: Եւ յայսմ աւուր Սամուէլի մարգարէի: Եւ գնաց Սամուէլ ի տուն իւր...:

18. Թղ. 24ա. Յայսմ աւուր վկայութիւն Բասսա եւ որդւոց իւրոց: Սրբուհին Բասսա էր յաւուրս Մաքսիմիանոսի...:

ա. Թղ. 25ա. Ծն. Փիլիպերթի հաւր:

19. Թղ. 25ա. Նաւ. ԺԱ.=ԻԱ. Աւգ.: Տաւն է Ննջման Աստուածածնին: Եւ վկայութիւն Իսուս(տ)իոսի: Քրիստոսի վկայն Իուստիոս նախ զաւրական էր...:

20. Թղ. 27ա. Յայսմ աւուր տաւն է Աբրահամու, Սահակայ եւ Յակոբա: Եւ յիշատակ առաքելոյն Թադէոսի, որ յՈւռհա զԱբգար մկրտեաց...:

21. Թղ. 27ա. Նաւ. ԺԲ.=ԻԲ. Աւգ.: Տաւն Ննջման Աստուածածնին: Եւ տաւն Թովմայի առ.: Առաքեալն Քրիստոսի Թովմաս, անուանեալն Երկուորեակ...:

22. Թղ. 28բ. Յայսմ աւուր սրբոյն Ագաթոնիկոսի: Մաքսիմիանոս ամբարիշտ արքայն առաքեաց...:

ա. Թղ. 30ա. Ի սմին աւուր Ղուկիանոսի: Ծն. Տիմաւթէի, Սինքլիարանոսի եւ այլոցն:

23. Թղ. 30ա. Նաւ. ԺԳ.=ԻԳ. Աւգ.: Իննաւրեայ տաւն է Ննջման Աստուածածնին: Եւ յայսմ աւուր վկայութիւն Ս. Իրինոսի եպիսկոպոսին: Սուրբն Իրինոս եպիսկոպոս էր Մոյիսի գաւառին ի ժամանակս կռապաշտ արքային Դիոկղետիանոսի...:

24. Թղ. 30բ. Նաւ. ԺԴ.=ԻԴ. Աւգ.: Վկայութիւն Ս. Վկային Տիմոթէոսի: Աստուծոյ սիրելին եւ սքանչելի այրն Տիմոթէոս...:

25. Թղ. 31ա. Յայսմ աւուր սուրբն Ագապիոս եւ սրբուհին Թեկղայ ի քաղաքին Գազայ...:

ա. Յայսմ աւուր վկայութիւն Բարթողոմէոսի առաքելոյն. հանգիստ Նշխարացն:

բ. Ի սմին Եւտիքու աշակերտին Յովհաննու աստուածաբան աւետարանչի: Եւ սուրբ հաւրն Կալինիկոսի: Ծն. Գիւտ Նշխարաց Բարթողոմէոսի առաքելոյն:

26. Նաւ. ԺԵ.=ԻԵ. Աւգ.: Տաւն ամենասրբուհոյ Աստուածածնին զոր կարգեաց սուրբն Գրիգոր: Մեծ հայրապետն Հայոց սուրբն Գրիգոր կործանեաց զամենայն պատկերս կռոցն...:

27. Թղ. 31բ. Յայսմ աւուր վկայութիւն Աթանասի եպիսկոպոսի: Եւ Խանթուշի որ մկրտեցաւ: Երանելի ադախինն Քրիստոսի Խանթուշ էր ի Սելեւկիոյ...:

28. Թղ. 33ա. Յայսմ աւուր եւ զերկու ծառայսն երանելոյն Խանթուսի՝ զՔարիսիմոս եւ զՆէափիտոս կացուցին առաջի Աւրեղիանոսի...:

29. Թղ. 33ա. Նաւ. ԺԶ.=Աւգ. ԻԶ.: Ադրիանոսի եւ որոց ընդ նմա: Վկայն Քրիստոսի սուրբն Ադրիանոս եւ Նատալիայ ամուսինն իւր...:

30. Թղ. 36ա. Յայսմ աւուր Վկայութիւն Ս. Ապուղիմոսի: Սուրբ վկայն Քրիստոսի Ապուղիմոս էր քրիստոնեայ ի Տենեդւոյ կղզոյն...:

ա. Թղ. 36բ. Ի սմին ԻԹ վկայիցն որ ընդ նմա ի Նիկոմիդիայ կատարեցան. յայսմ Հռիփսիմեանցն եւ որք ընդ նոսին:

31. Նաւ. ԺԷ.=ԻԷ. Աւգ.: Վկայութիւն սրբոյն Ատրներսեհի. եւ Անտիոքայ բժշկի: Քրիստոսի մարտիրոսն Ատրներսեհ որդի էր Պրոբոսի ի Հռոմայ արքային...:

32. Թղ. 37ա. Յայսմ աւուր Վկայութիւն Անտիոքա բժշկի: Սուրբ վկայն Քրիստոսի Անտիոքոս բժիշկ էր...:

ա. Թղ. 38ա. Նաւ. ԻԷ. եւ Սեպտ. Զ. գրած է Պատմութիւն Սուքիասեանց. ստո կարգայ, զի այսաւր է նոցա տաւնն, որ Նաւասարդի ԺԷ. եւ Աւգոստոսի ԻԷ.:

բ. Եւ սուրբ հաւրն Պեմենոսի եւ այլոցն:

33. Նաւ. ԺԸ.=ԻԸ. Աւգ.: Վկայութիւն սրբոց վկայիցն Ստրատոնիկոսի եւ Փիլիպոսի եւ Տիքիանոսի: Փառաւորեալ մարտիրոսքն այս էին...:

34. Թղ. 38բ. Յայսմ աւուր Վարք երանելոյն Ոնեսիմոսի, ոչ աշակերտին Պաւղոսի: Սորա ծնաւղքն էին ի Կեսարիայ Պաղեստինացւոց...:

ա. Ի սմին Յովհաննու հայրապետին Բիւզանդացւոյ: Ծն. Աղատիանոսի եպիսկոպոսի եւ Երեմիդոսի եպիսկոպոսի եւ Մովսէսի Եթէոպացւոյ եւ այլոցն:

35. Թղ. 39բ. Նաւ. ԺԹ.=Աւգ. ԻԹ.: Տաւն է Գլխատման Յովաննու Կարապետին: Կարապետն Քրիստոսի եւ մկրտիչն Յովաննէս սրբութեամբ սնաւ...:

36. Թղ. 41ա. Նաւ. Ի.=Աւգ. Լ.; Վկայութիւն Ս. Փիլիմոնի եպիսկոպոսի: Սուրբ եպիսկոպոսն Փիլինիոս էր ի րանդին...:

37. Թղ. 41բ. Յայսմ աւուր Ս. Տատիանոսի վկայութիւն է, զոր ոմանք Տիտոն անուանեն: Զսոյ անաւրէն դատաւորն Ուրբանոս..:

ա. Ի սմին աւուր Փիլիկտոսի եւ Ադատիկոսի:

38. Թղ. 42ա. Նաւ. ԻԱ.=ԼԱ. Աւգ.: Գիւտ գաւտոյ ամենասրբուհոյ Աստուածածնին, զոր տարան ի Կոստանդինուպաւլիս: Զգաւտի ամենայսուրբ Կուսին Մարիամայ Աստուածածնին գտեալ յԵրուսաղէմ...:

39. Յայսմ աւուր վկայութիւն Ս. Փատինեայ, որ է կինն Սամարացի, յորմէ Քրիստոս ջուր խնդրեաց: Կինն Սամարացի...:

40. Թղ. 42ա. Նաւ. ԻԲ.: Ամիս Սեպտեմբերի տարեմուտ է Հռովմոց. եւ սկիզբն թուականութեան: Ի մինն Վարք երանելոյն Սիմէոնի Սիւնակեցոյ որ ի Մանդրայն ի Հալպ: Աւգնեա Տէր Յիսուս: Երանելին Սիմէոնն էր ի քաղաքին Անտիոքայ Ասորոց...:

41. Թղ. 46ա. Յայսմ աւուր տաւն է մեծ զաւրավարին Իսրայէլի Յեսուայ պաշտաւնէին Մովսէսի, որ առաջնորդեաց որդւոցն Իսրայէլի յերկիրն Աւետեաց...:

42. Նաւ. ԻԳ.=Բ. Սեպտ. Վկայաբանութիւն Ս. Մամասայ, զոր յիշէ սուրբն Գրիգոր Աստուածաբան ի Նոր Կիրակէի ճառն: Յամս Աւրեղիանոսի ամբարիշտ արքային...:

43. Թղ. 47բ. Յայսմ աւուր յիշատակ է երանելոյն Յովհաննու Կոստանդինուպաւլսի հայրապետի պահացողի: Սուրբ հայրապետն Յոհաննէս յաղագս ճգնութեան իւրոյ Պահացաւղ անուանեցաւ...:

ա. Ի սմին եւ Փիլիկտիմոնի եւ Պաւղոսի եպիսկոպոսի:

44. Թղ. 48ա. Նաւ. ԻԴ.=Գ. Սեպտ.: Վկայաբ. Ս. Անթիմոսի Նիկոմեդեայ եպիսկոպոսին: Ի ժամանակս ամբարիշտ արքային Մաքսիմիանոսին...:

ա. Ի սմին աւուր եւ Երանոսի եպիսկոպոսի: Ծն. Գրիգորի պապու:

45. Թղ. 49ա. Նաւ. ԻԵ.=Դ. Սեպտ.: Վկայութիւն Ս. Բաբելա Անտիոքեա հայրապետի եւ վկայի: Ի ժամանակս Նումերիանոսի...:

46. Թղ. 49ա. Յայսմ աւուր տաւն Սուրբ վկայիցն Ոկիանոսի (Ակինթոսի), Թէոդորոսի, Ամիանոսի եւ Յուլիանոսի...:

47. Թղ. 50ա. Նաւ. ԻԶ.=Ե. Սեպտ.: Վկայութիւն Ե. Խարազնազգեստ կուսանացն եւ Ամոնի սարկաւագի: Սրբուհի կանայքն էին...:

48. Թղ. 51ա. Յայսմ աւուր տաւն է Զաքարիայի Մարգարէի հաւրն Յովաննու Մկրտչի: Մահ Զաքարիայի մարգարէի: Զաքարիա էր որդի Ադոմնեայ...:

ա. Ի սմին եւ Զամպելոսի, Ղումբանոսի եւ Թուլթայելի: Ծն. Պերթինոսի հաւրն:

49. Թղ. 51բ. Նաւ. ԻԷ.=Զ. Սեպտ. Վկայութիւն սրբոյ եւ վկայի Երմոնիայ: Առաքեալն Փիլիպպոս դստերս ունէր չորս կուսանս մարգարէս...:

50. Թղ. 53ա. Յայսմ աւուր տաւն էր Գժան մարտիրոսացն Քրիստոսի Փաւստոսի քահանայի եւ Բիբիա սարկաւագի, Նիւսեա ընթերցողի եւ այլ Ժ. ընկերացն: Սոքա էին...:

© National Library of Armenia

51. Թղ. 53ա. Յայսմ աւուր վկայութիւն Ս. Սուքիասանց ի Սուկաւետ լերինն ի Հայս: Առաքեալն Քրիստոսի Թադէոս յորժամ եկն ի Հայս...:

Տես վերագոյն § 32ա դիտողութիւնը օրինակողին:

ա. Ի սմին սրբոց վկայիցն Եւտիքսիոսի եւ Բոմոսի, Մակարու եւ Զենոնի: Եւ տաւն սքանչելեաց հրեշտակապետին Միքայելի որ ի Խոնաս:

52. Թղ. 54բ. Նաւ. ԻԸ.=Ե. Սեպտ.: Վկայաբանութիւն սուրբ վկային Սոզոնի: Վկայն Քրիստոսի Սոզոն...:

53. Թղ. 54բ. Յայսմ աւուր տաւն է սուրբ վկային Եփիքոսի: Սայ էր ի Կեսարացւոց քաղաքէն...:

ա. Յայսմ աւուր Նախատաւնակ է Ծննդեան ամենասրբուհոյ Աստուածածնին:

բ. Ի սմին աւուր եւ Երմոնա առաքելուհոյն եւ Նեքտառինեա կուսին: Ֆռ. Եւերցի եւ Քումփերսի:

54. Թղ. 55բ. Նաւ. ԻԹ.=Ը. Սեպտ.: Ծնունդ է ամենաւրհնեալ սրբուհոյ Աստուածածնին. եւ ամենաւրհնեալ կուսին Մարիամայ ի ծնողաց իւրոց Յովակիմա եւ յԱննայէ: Ի Պատմութենէ գրոց սրբոյն Յակոբայ եղբաւր Տեառն: Ի Թուոյ եւ ի տոհմէ ԺԲ. ազգաց Իսրայելի էր Յովակիմ...:

55. Թղ. 58բ. Նաւ. Լ.=Թ. Սեպտ.: Միւսանգամ տաւն է Ծննդեան ամենասրբուհոյ կուսին Մարիամու Աստուածածնին: Եւ յիշատակ ծնողաց իւրոց Յովակիմայ եւ Աննայի: Եւ յայսմ աւուր վկայութիւն սրբոյ վկային Սեւերիանոսի Սեբաստացւոյ: Վկայն Սեւերիանոս էր ի քաղաքէն Սեբաստիոյ...:

56. Թղ. 59ա. Յայսմ աւուր Վարք սրբոյն Սահակայ Հայոց եպիսկոպոսապետին, որ էր Թոռն Ս. Գրիգորի Լուսաւորչի: Սուրբ հայրապետն Հայոց Սահակ, որդի էր մեծին Ներսեսի...:

ա. Ի սմին աւուր եւ Սեւերոսի վկայի Սեբաստացւոյ: Ֆռ. Գորգինոսի մարտիրոսի:

57. Յայսմաւուրքս կ՚աւարտի Թղ. 720ա. «Աւելեացն Ե. եւ յԱւգոստոս Ժ.: Տաւն է այլակերպութեան Տեառն: Եւ վկայութիւն սրբոյն Անտոնինոսի: Քրիստոսի վկայն Անտոնինոս ազգաւ Աղեքսանդրացի էր...:

Մասնաւորապէս ուշադրութեան արժանի են Յայսմաւուրքս մէջ.

58. Թղ. 72ա—75բ. Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ Գովեստ ի սուրբ Խաչն տէրունական: Մի ոք այսուհետեւ ամաւթ համարեսցի զպարկեշտ նշան փրկութեան մերոյ...: Վջ. Նոյնպէս եւ ի ձեռն փայտին փրկութիւն լիցի: Ընդ այսր ամենայնի փառաւորեսցուք զՔրիստոս...: (Վիենն. 7, 76ա):

59. Թղ. 99բ—103ա. Աղաւթք եւ հանգիստ սուրբ առաքելոյն եւ աւետարանչին Յոհաննու: Էր ընդ եղբարսն...:

60. Թղ. 181բ. Տօն է սուրբ... Հրեշտակապետացն...: Ի ճառէն Պանտալեւոնի վասն տաւնի Հրեշտակապետացն (Վիենն. 7, 158ա):

61. Թղ. 185ա. Տեառն Ներսէսի Հայոց կաթողիկոսի ասացեալ բանս մաղթանաց առ սուրբ հրեշտակս յաւարտ տաւնի նոցա ոտանաւոր չափով: Այլ պաղատիմք առ հոգեղէնս...:

Հրտ. Ներսէս Շնորհալւոյ Տաղք չափաւ, Վենետ. 1830, էջ 267—275:

62. Թղ. 297ա. Երանելոյն Յոհաննու Ոսկէբերանի խաւսք ասացեալ: Երէկ զփառաւորեալ ծննդեան Տեառն տաւնեցաք զաւր մեծաւ աւետեաւք: Այսաւր զկուսական արգանդն եւ սուրբ խանձարուրսն գովասացութեամբ պատուեսցուք...: Վջ. Իսկ անդրանիկ միածինն Յիսուս սփռեալ տարածեաց զարդարութիւն: — Ով Մարիամ կոյս եւ մայր, որ զայր ոչ գիտես... ծնելոյն ի քէն Աստուծոյն մերոյ փառք յաւ. ամէն: Կատարի իսկ ժողովք ամենասրբուհոյ Աստուածածնին ի Վլաշենայ. յորում կայ եղեալ շեղջ սրբուհի (Վատիկ. 41, Թղ. 17ա):

63. Թղ. 303ա—308ա. Երանելոյն Պրոկղի եպիսկոպոսապետի Կոստանդինուպաւլսի ասացեալ ի սուրբն Ստեփանոս: Երեւելի արեգականս ընդ երկնաւ ծագելով զարուսեակն ընդ ինքեան ունելով բերեալ ծագէ...: Վջ. Փոխանակ մարտին շնորհելով նմա յաղթանակ. պարգեւեա տաւնողացս զթողութիւն յանցանաց... (Վենետիկ, Թ. 200, 427ա):

64. Յիշատակարան Կիրակոս Արեւելցւոյ (Թղ. 720բ 721ա).

Յուսոփն Աստուծոյ եւ սիրով սրբոց նորա նուաստ ոգիս Կիրակոս վարդապետ Արեւելցի ի վանաց Գետկեցի, ի միասին հաւաքեցի զտաւնս սրբոցս Աստուծոյ, ըստ իւրաքանչիւր յիշատակի աւուրց. գրեցի եւ զհամառաւտ պատմութիւնս նոցունց, որոց ոչ էր

եղեալ ի գիրս Յայսմաւուրց, եւ խառնեցի ընդ նախակարգսն: Եւ աղաչեմ (զ)տաւնաւղսդ եւ զգրաւղսդ՝ գրել եւ զայս յիշատակ բանի, զի եւ դուք գրեսջիք ի դիրն կենաց. եւ որ բանիս զմերս՝ ջնջեսցի եւ ինքն ի դպրութենէ կենաց:

Եւ եղեւ իրարկութիւնս այս (յ)ՉԺԸ (1269 թվականիս, յաշխարհիս Կիլիկեցւոց ի Սիս մայրաքաղաքի, ի թագաւորութեանն Հեթմոյ եւ յառաջին ամի իշխանութեան որդւոյ նորա Լեւոնի (ի) ԿԶ. ամի կենաց պանդխտութեան մերոյ, յորում աւարտն եղեւ ի փառս Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս:

Բէյրութի Քափուչիններու Թ. 1 Յայսմաւուրքը 1313էն (տես վարը) ունի յաւելուածս. «Իսկ ճառք զոր յաւելաք մեք. ճՀ. անուամբն Աստուծոյ». իսկ Վենետիկի Զ. Յայսմաւուրքը 1435էն Հայապատում, Բ., էջ 472) եւ Երուսաղէմի Թ. 75 (1439էն) նոյնը ունին. «Եւ ճառք որ յաւելաք մեք ընդ հինն խառնեալ (Թ. 75 խառնեցաք) ճՀ. անուամբն Աստուծոյ...»:

ԳԼԽԱՒՈՐ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ: 1. Թղ. 721ա. Փառք երանեալ ամենակալ տէրութեան մի աստուածութեանն Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ. այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Որք աստուածային սիրոյ փափաքեալ հետեւին միշտ յարայզուարճ բերկրանաւք՝ խորհին յաւրէնս Տեառն ի տուէ եւ ի գիշերի ըստ հոգէընդալ մարգարէին, որ երանէ զաւակ ունողսն ի մայրն հասարակաց ի մեծն Սիոն: Սոյնպէս եւ գերայհռչակեալս իմաստութեամբ եւ հանճարով աստուածայզգեստ երջանիկ հայրապետս մեծի աթոռոյն նախնոյն մերոյ կրկին լուսաւորչին սրբոյն Գրիգորի Վկայասիրին, որ ի գաւառին Քեսուն ի Կարմիրն կոչեցեալ վանք, տէրս Կոստանդին, որ այժմ եւ հանապազ սպասաւորէ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի անխարդախ ի տուէ եւ ի գիշերի. որ զերկեղն աստուածային եւ զիմաստութիւն յինքն բարձեալ կրէ շնորհաւք սուրբ Հոգոյն. որոյ փափաք ըղձիցն յաստուածայինսն եւ ի հուր սիրոյն հանապազ բորբոքի աւր ըստ աւրէ աճմամբ, տալ զանձն ի հպատակութիւն խրատուց արանց աստուածայզգեստից: Սայ կամեցաւ ունել ապաստանի քաղաք եւ հետեւել ի սէր ցնդելոցն անջինջ յուսոյ յիշատակ զգումարս Երուսաղէմի վերնոյ, եւ զգրեցեալսն յերկնից դպրութիւնն, զփառաւորեալ ջոկս հաղորդելոցն երանութեանն Աստուծոյ՝ զսրբոց ժողովս զհիմանց լուսափայլ շինուածոց Սիոնի նորոյ զաստուածընդիր նախահարցն եւ զդրանց մտից յաշխարհի աստուածգիտութեան լուսոյ, զմեծայմեծար մարգարէիցն եւ զկոչողացն զմեզ ի յորդէգրութիւնն Աստուծոյ, զառաքելոցն եւ զսրբոցն եւ զտուողացն աւրինակ հանդիսի ճգանց զքաջայվաստակ վկայիցն, զբարձողացն սիրով զտիրական զխաչ, զհամայհրեշտակ ճգնաւորացն եւ զժուժկալողացն զգերագոյն բնութեանն անչաղախ կուսանացն: Զորոյ ջերմեռանդն սիրով եւ պինդ հաւատով եղեւ ցանգացող գրել զգովելի եւ զաստուածայհաճոյ վարսն եւ զոսկալի համբերութեամբ վկայութիւնն, ի պայծառութիւն եւ ի լրումն տաւնելի յիշատակաց նոցա յիւրաքանչիւր աւուրս կատարման: Որ յողնակի եւ բազմայգոյն արդիւնս ամբարէ տաւնասիրացն անձանց, որ առաւել է քան զկարծիս մտաց եւ զակնկալութիւն: Միոյն կոչնայտեառն առատութեան գոլով վայելուչ, զի բարձողացն զծանրութիւն տաժանելի կրիցն տաւթոյ, եւ վաստակոցն ի զանազան հանդէս մարտի այսր կենաց ուղոյ (ուրիշ գրչէ ուղղուած՝ ուղղոյ) հաւասար եւ զուգայկշեռ է վարձատրուն այնոցիկ որ դոյզն ինչ զյաւժարութեանն ընձայեն եւ երեւել: Եւ զմասնաւոր վաստակ կրակցութեանն մտաւք եւ սիրով խրատու վկայիցն ըստ անսուտն բանի, թէ Որ ընդունի զարդար յանուն արդարոյ՝ զվարձս արդարոյ առցէ:

Յոր եւ ցանկացող եղեալ ի տէրունական մատեան վերասացեալս տէրս Կոստանդին եւ սպասաւորն իւր Յակոբ քահանայն. եւ ետուն գրել զսա յարդար ընչից իւրեանց ի յիշատակ հոգւոց իւրեանց եւ ամենայն զարմից ի փառս լուսայզգեստից անձանց եւ իւրեանց ի կեանս ի սատարութիւն յաստուածայինսն. եւ յետ աստի ելիցս իւրեանց նախասացեալ արքեպիսկոպոսիս տէր Կոստանդեայ եւ լերդայկից որդէկին իւր Նորին Յակոբայ, որք իբրեւ զմի մարմին բանական յերկուց առ մի կերպարան շինեալ կենցաղայկցելով իբրեւ հարազատք եւ միայշունչք եւ միակրաւնք եւ զուգայհաւանք ի յերից աչաց առ մի եւ նոյն չաւիղք խորհրդայկցեալք: Վասն զի Յակոբայ միակն գոլով, զոր հարեալ եղեւ մինն նետիւ յանաւրինաց ի մերն Հռոմայկան Կլայն, զոր պաշարեաց

© National Library of Armenia

Մելէք Աշրաֆն, որ տիրէր աշխար(հ)ին Իգիպտոսի եւ ամենայն ծովեզերացն մինչեւ յԱնտիոք եւ ամենայն Շամրուն մինչ յեզր մեծին Եփրատայ. եւ էր Թիւն Հայոց ՉԽ (1291):

Արդ եղեւ աւարտումն մատենիս ի մայրայքաղաքս Սիս, որ է առ ստորոտով աստուածայպահ դղեկիս, զոր Տէր Յիսուս անդրդուելի պահեսցէ միշտ եւ հանապազ: Եւ վասն զի ոչ զոյր սոցայ տեղի անդոր(ր)ելոյ ի մի վայր՝ գրեալ եղեւ մասն ինչ ի Սիս եւ մասն ինչ ի Ճոխաթն, որ է վանք Ասորոց ազգին, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին. եւ մասն ինչ ի սուրբ ուխտն Զորոյ կոչեցեալ վանք, ընդ հովանեաւ սուրբ Նշանացն եւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ Սիոնի. ի Թուականութեանս Հայոց մեծաց ՉԿ (1310), ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ Կեսարացւոյն եւ ի թագաւորութեանն Աւշնի աստուածասիրի եւ բարեպաշտի, որդոյ Լեւոնի, որդոյ Հեթմոյ: Զոր աւրինակ որպէս ի հնումն զԴաւիթ ընտրեաց Աստուած յորդիսն Յեսսէ, սայպէս եւ զԱւշինս ի նորումս ընտրեաց ի մէջ եաթն եղբարց իւր եւ էած թագաւոր տանս Թորգոմայ եւ ազգիս Հայկայ. յոր եւ համարձակ կարասցէ կարդալ զաստուածայնուագ մարգարէին բանս, թէ Փոքր էի ես յեղբարս իմ եւ կրսեր տան հաւր իմոյ. յոր թէ եւ ոչ արածէր սայ զխաշինս հաւրն, որպէս զԴաւիթ, բայց զառծումն եւ զթագն ընկալաւ յԱստուծոյ եւ խաղաղութեամբ արածէ զբանաւոր հաւտս Հայոց ազգիս. զոր յայլ եւ յայլ ժամանակս նեղէին յանաւրինաց. յոր եւ զերկնային խաղաղութիւնն ինքն ընդալցի ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ երկար ամաւք եւ բազում ժամանակաւ:

Արդ աղաչեմ զհանդիպեալս վերոյգրեալ յիշատակացս հաւաքեալ բազմայշարչար վկայից, որ ի սուրբ մատենիս, յաւէտ որ յետ մերոյ էլեցս յայսոսեայցս վայելէք ի սայ հոգեւոր մխիթարութեամբ, սրտի մտաւք յիշել յաղաւթս ձեր զիմս նվաստութիւն՝ զկոստանդին եպիսկոպոս, եւս եւ զ(ի)Քրիստոս հանգուցեալ քեռին իմ եւ զյոյժ երախտաւորն իմ զՅոհանէս Կարմիրվանցի եւ զքաղցրիկ մայրն իմ զԱզվորտիկին. ընդ նմին եւ զհայրն զՎասիլ եւ զարեամբ նահատակեալ հայրապետ եղբայրն իմ զՍարգիս, որ մինչդեռ մանուկն էր տեւաւք խողխողեալ եղեւ յանաւրինաց. եւ զԱւշին որդի նորին որ յանցեալ ամի հանգեաւ խաղաղութեամբ ի Քրիստոս եւ է ի պահեստի ի սուրբ ուխտն Ճոխաթն յամսեանն յու(նու)արի յերեք աւրն[1]: Ընդ սոցայ յիշեսցիք եւ զհանգուցեալ հայրըն Յակոբայ զՍարգիս եւ զմայր նորին զՄլհամ խաթուն եւ զանդրանիկ հայրապատ անդրանիկ եղբար ժառանկողի մատենիս Յակոբայ զՍտեփանոս. որոյ Տէր հատուսցէ զանսպառ բարիսն աստ եւ ի հանդերձելումն եւ յիշելոցս եւ յիշողացս առ հասարակ միայպէս ողորմեսցի ի մեծի աւուրն ահագին ժամուն, յորժամ ճարտասանութիւնքն բանքն սպառին եւ գործքն թագաւորեն, միայն ունելով բարեխաւս զբազմութիւն աստ հաւաքեալ սրբոցս իւրաքանչիւր յանուանէ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում վայելէ փառք իշխանութիւն եւ պատիւ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

2. Թղ. 724ա (Մանրագիր). Ոհ զմեղաւք դատապարտեալ կազմող սորա զՅակոբ երէց զորդի Մեծ-Պարոնին եւ զեղբայրն իմ զՅովանէս եւ զհանգուցեալ եղբայրն իմ ի Քրիստոս զկոստանդին հանդերձ ծնաւղաւք, կենդանեաւք եւ հանգուցելովք, յիշեցէք ի Տէր Յիսուս Քրիստոս աղաչեմ, ով աստուածասէր ընթերցողք, ընդ նմին աղաչեմ յիշել ի Տէր զպատուական ծերուն զՎասիլ քահանայն եւ զծնաւղսն իւր, աղաչեմ յիշել ի Տէր զուսուցիչն իմ զԹորոս քահանայ զմական- (ուամբ պատուած) կոչեցեալ Երկաթ. եւ Աստուած (յիշողացդ. պատուած) եւ յիշելոցս առ հասարակ (ողորմի Աստուած) ի փառաւորեալ գալըս(տեան իւր)ոյ, որում փառք յաւիտ(եանս յա)ւիտենից ամէն: Ի թվ(ին) ՉԿ° գր)եցաւ սա ընդ հովանեաւ սուրբ (Աստուածածնին°):

3. Անդ. (այլ գրիչ). Եւ զտէր Կոստան. (դատարկ չորս տող) Զկոստանդին <ստացող> տաւիս յիշեսջիք ի բարին Քրիստոս. եւ Աստուած զձեզ յիշէ. եւ նմա փառք յիշատակի սորա. յաւիտեանս ամէն. ամէն:

4. Թղ. 6բ. Ողորմեա ստացաւղի սորա տէր Կոստանդեա եւ ծնաւղաց իւրոց:

5. Թղ. 16ա. Ողորմեսցի ստացաւղի զրոցս տէր Կոստանդեայ եւ ծնողաց իւրոց եւ Յակոբայ քահանային՝ սպասաւորին իւրոյ եւ տառապեալ գրչի. ամէն (նոյնը 43բ, 46ա եւն):

6. Թղ. 49բ. Յիշ(ես)էք աղաւթիւք զտացող զրոցս զտէր Կոստանդին եւ զծնաւղս իւր եւ զԱկոբ քահանայն զսպասաւորն իւր եւ զտառապեալ գրիչ: (Նմանք՝ 58բ, 62բ, 168բ):

7. Թղ. 75բ. Փրկեալքս արեամբ Կենարարին եւ պահպանեալք սրբոյ Խաչին, ցաւոց գնեալ եւ վտանգեալս մեղաւք Կոստանդին եպիսկոպոս Կարմիրվանցի ի վերայ երեսիս երկրպագեմ տանջաւղացդ եւ խնդրեմ ի ձէնջ, սուրբ եղբարք, զի զիմս անարժանութիւն եւ զլերդակիցն իմ զՅակոբ վանական քահանայ եւ զծնողս մեր յիշել...:

8. Թղ. 328ա (գրչէն). Որ էք լցեալ շնորհաւք Հոգւոյն սրբոյ՝ զտարտամ անձն զԿոստանդին եպիսկոպոս եւ զՅոհանէս զերախտաւոր սնուցիչ քեռին իմ եւ զքաղցրիկ մայրն իմ զԱզվորտիկին եւ զաւանդեալն ի նմանէ յաւր մահուան իւրոյ զաղիոզորմն յամենայն ի կեանս իւր զաչացս լոյս եղբաւրորդին իմ զԱւշին, զոր սնուցեալ էի զամս Լ եւ Ե անհայր եւ անմայր, որ հանգեաւ այս աւր ի Քրիստոս, ի քաղոց ԻԶ. եւ յունուարի Գ. բարի խոստովանութեամբ ի սուրբ ուխտն որ կոչի Ճոխաթ. որ եւ եղաւ ի տապանի ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին եւ սուրբ մաւր (մա՞ր) Պարսամի. զոր տէր Յիսուս Քրիստոս հանգուսցէ ընդ ամենայն սուրբս իւր զհոգի սորա ի փառաւոր դալստեանն իւր: Աղաչեմ յիշել յայսմ տաւնի սրբոյն Գորդիոսի, որ Գ. աւրն է յունուարի ամսոյ, զի եւ մեզ եւ ձեզ յիշողացս եւ յիշելոցս առ հասարակ պարգեւեսցէ քաւութիւն մեղաց եւ թողութիւն յանցանաց. ամէն: Եւ էր թվիս Հայոց ՉԾԹ (1310):

9. Թղ. 474բ. Քրիստոս Աստուած... այց արայ մեղուցեալ եւ անարժան ծառայի քո տէր Կոստանդեա ստացողի զրոցս եւ ծնաւղաց իւրոց եւ Յակոբա քահանայի սպասաւորին իւրոյ. յիշեա, Տէր իմ Յիսուս, զտառապեալ գրիչս զՍտեփանոս: (Նման մը նաեւ Թղ. 111բ):

10. Թղ. 2բ—3ա. Զեռագրիս սկիզբը Գրիգոր աւագերէց գետեղած է 1546ին (տե՛ս Յիշ. 13) հետեւեալ գրուածքը, գրուած իր վարդապետէն աւագերէց Լեւոնէն. որուն համար կ'ըսուի Յայսմաւուրքիս մէջ Թղ. 281ա ի լուսանցս (Քաղոց Ը.=ԺԶ. Դեկտ.) «Այս է սուրբ Նշանին սքանչելիքն որ եղս, որ անձրեւեց. տարի մի չանձրեւեց. գնայ ի սկիզբն Թղթին գիտ եւ կարդայ»:

(Սքանչե)լիք որ կարատ(եցաւ) ի ձեռն սուրբ Նշա(նին):

Պարտ եւ արժան (է զայ)ս քարոզել եւ (յա)յտնել զՍքանչելի զաւրութիւնս, որ եղեւ ի ժամանակիս մեր ի ձեռն կենսակիր սուրբ Նշանին սքանչելի եւ զերազանցիկ հիացումն. զի գրեալ է. Զխորհուրդս թագաւորի բարիոք է ծածկել, այլ զգործս Աստուծոյ յայտնել փառաւք»: Ունկն դիկ ստուգութեամբ, ազաչեմ զձեր սէրդ, որպէս զի զամենազաւր եւ զբարեգութ մարդասիրութիւն Աստուծոյ առաւել փառաւորեսցուք, որ առնէ զսքանչելիս ի ձեռն սուրբ Խաչին իւրոյ, յորոյ մեծապէս աւգտութիւնս պտղաբերէք անձանց ձերոց:

Եւ եղեւ այս, ով քրիստոսասէր ժողովուրդ, ի Կիպրոս կղզոջ, ի մայրաքաղաքն Լեւքուսիեայ, սքանչելագործութիւնս եւ նշանս այս. զոր բազում բազմանաւք կամիմ պատմել ձեզ: Ի Քրիստոսէ փրկչէն մերմէ մարդեղութենէն ՌՆԿԷ (1467) ամի եւ ի մեծ թուականութեանս Հայոց ՉԺԶ (1467), ի հայրապետութեան տեառն Ստեփանոսի եւ յեպիսկոպոսութիւն Կիպրոսա տէր Սարգսին եւ թագաւորի ՌԿ ծագին, դեկտեմբեր ԺԶ եղեալ էր էրաշտութիւն եւ անձրեւ ոչ զայր վասն մեղաց մերոց. որպէս եւ գրեալ է. «Եղիցի ի վերայ քո երկինք պղնձիք եւ երկիր ի ներքոյ քո երկաթի»: Զի երկիր ընաւ չոր եւ ցամաքեալ էր եւ մարդիկ ոչ սերմանեցին. եւ որք սերմանեցին՝ ոչ բուսանէր վասն չգոյէ հիւթ եւ խոնաւութիւն երկրի. եւ բազում ջրհորք եւ աղբիւրակունք ցամաքեցան: Եւ ելեալ Հոռոմին եւ Ֆռանկին ի յաղաչանք ի Տէր ողորմեան երկու եւ երեկ անկամ վասն անձրեւու. եւ ոչ անձրեւեաց: Եւ ապայ յետոյ Հայոց ազգս առին հրաման ի Ֆռա(ն)քաց, զի եւ նոքայ ելանեցին ի յաղաչանք ի Տէր ողորմեայն: Եւ ժողովեցան եւ ելին եպիսկոպոսն եւ քահանայքն եւ ժողովուրդքն եւ վանականքն, արք եւ կանայք, ծերք եւ տղայք առ հասարակ. եւ ապաւինեցաք ի զթութիւնն Խաչեցելոյն վասն մեր՝ Քրիստոսի Աստուծոյն մերոյ եւ ի սուրբ Խաչ նորին՝ սուրբ Նշանին Հայոց, որ կայ այժմ ի քաղաքին Լեւքուսիեայ զսքանչելագործ: Եւ ընթացան ամենեքեան առ հասարակ սուրբ զգեստիս չուրջառաց եւ սուրբ Նշանաւ եւ սուրբ Աւետարանաւ, սաղմոսիւք եւ աւրհնութեամբ եւ երգովք հոգեւորաւք եւ բազում արտասուաւք եւ պաղատանաւք: Ելեալք

[1] Յունուար 3 չարաթ օր կ'ինայ 1310ին:

© National Library of Armenia

ի յարեւելից դուռնն քաղաքին եւ գնացեալ մինչ ի Աստրոց վանքն Սուրբ Խաչն եւ անդի դարձեալ եկեալ պաշտելով ի քաղաքն. եւ մտեալ ի միւս դուռն արեւմտից քաղաքին: Եւ երկինք եւ աւդն ամենեւին պարզ էր իբրեւ զամառային: Եւ եկեալ ի տեղի մի որ կայր ջուր. եւ որժամ ընթերցան զսուրբ Աւետարանն եւ զԱղաւթսն՝ եւ հասուցեալ զսուրբ Նշանն ի ջուրն, ո՜վ զարմանալի հրացմանս, զի ի նոյն ժամայն ամպեց երկինքն յարեւմտից հիւսիսոյ կողմն եւ սկսաւ անձրեւել մինչեւ զերկիրն լիացոյց: Եւ ուրախացեալ բերկրեցան ամենայն հաւատացեալ քրիստոնեայք եւ առաւել Հայոց ազգս, որ փառաւորեաց զսուրբ Նշանն. եւ ծանեան ամենայն ազգ քրիստոնէից, զի ճշմարիտ եւ ո(ւ)ղղափառ հաւատ է Հայոց ազգիս:

Ո՞վ ոք լսելով զսքանչելիս զայս եւ ոչ փառաւորեսցէ զայն, որ փառաւորեալն է ի սուրբ(ս) իւր: Լուր եղեւ այս հրաշկս ընդ ամենայն կղզին եւ փառաւորէին զԱստուած եւ գոհութիւն մատուցանէին սրբոյ Խաչին նորին Նշանին. եւ ասէին. Գոհանամք զքէն, աստուածազաւրաւդ սուրբ Նշան տէրունական, զի ոչ անտես արարեր զպաղատանս մեր. Կենսաբեր տունկ, որ կերակրես զհոգի եւ զմարմինս այնոցիկ, որք հաւատով կարդան առ քեզ եւ ի սուրբ անուն քո ապաւինեալ են. ո՜վ պարծանք եւ յոյս հաւատացելոց, որ հովանաւորեալ պահպանես. որք աներկուանալի հաւատով խնդրեն զքոյն աւգնականութիւնդ. ապաւեայ զմեզ յերեւելի եւ աներեւոյթ թշնամւոյն զաւաճանութենէ. զքեզ կարդա եւ փառաւորէ ամենայն լեզուք. զքեզ աւրհնէ ամենայն բերան, ո՜վ սուրբ Նշան տէրունական: Որ եւ զմեզ զամենայն հաւատացեալքս եւ երկրպագուս խաչին իւրոյ արժանաւորս արասցէ մեծի ծագման ճառագայթափայլ սրբոյ Խաչին, որժամ յարեւելից ընդ երկնիւք ծագեսցի եւ լուսովն իւրով լնու զամենայն փոսվածս երկնից մինչեւ ծագին ամենայն գգալի լոյսք լուսաւորացդ եւ զանդի ի վերա լերինն Գողգոթայ, որ տեղին է խաչելութեան: Յայնժամ բացցէ զաչս մեր տեսանել զլոյսն գերապայծառ խաչին եւ խաչելոյն Քրիստոսի եւ բացցէ զականջս մեր ի ձայն փողոյն եւ յարուսցէ ի հողաբնակ տապանէս յանվախճանութեամբ կալ առաջի ահաւոր բեմբին աջակողմեան դասուն. եւ եաւթնալիր աւրհնութեանն կոչման արժանի լիցուք եւ փառաւորեսցուք զՀայր եւ զՈրդի եւ զսուրբ Հոգին. այժմ եւ միշտ եւ ամէն:

11. Թղ. 725ա. (Վերջին նորոգողէն). Ո՜հ զմեղաւք զատապարտեալ կազմող սորա Գրիգոր զանարժան աւագերէց եւ զհայր իմ ի Քրիստոս զհանգուցեալ զԼեւոն եւ զմայր իմ զհանգուցեալ եւ զեղբայր իմ զհանգուցեալ Օվ(°)անէսայ որ սպանաւ ի մեր վանքայ ի Կարնօճիւղօն ի Քրիստոս ՌԾԺԲ (1512) հոգտեմբերի Ը. աւրն, եւ զիմ վարդապետս զԼեւոն աւագերէցս զհանգուցեալն ի Քրիստոս եւ հանդերձ ծնաւղաւք կենդանեաւք եւ հանգուցելովք... (առնուած Թ. 2 Յիշատակարանէն): Գրեցաւ ի Քրիստոսի ՌԾԽԶ (1546) եւ ի Թվ. Հայոց ՋՂԵ (1546) եւ ի յուլիս ամսոյ Թ. եւ ի ահկի ամսոյ Է. աւրն ուրբաթ գրեցի եւ կազմեցաւ այս գիրգիս:

12. Թղ. 330ա (նոյն գրչէն). Քրիստոս Աստուած... ողորմեա տօնողացս եւ գրողի Գրիգոր սուտանուն իրէց եւ ծնողաց մերոց: (Նոյնը նաեւ Թղ. 329բ, 331բ):

13. Թղ. 3ա. Գրեցաւ ի Քրիստոսի ՌԾԽԶ (1546) եւ ի Թուականին Հայոց ՋՂԵ. Յուլիս ամսոյ Ի. եւ ի Ահեկի ամսոյ ԺԸ. ձեռամբ սուտանուն եւ անարուեստ գրէչիս եւ մեղաւոր եւ անարժան Գր. աւագերիցուն ողորմած Լիվոնին որդուն. եւ Քրիստոսի նմայ փառք յաւիտեան. ամէն:

14. Թղ. 3բ. (Թ. 13 յիշատակարանին կից). Արդ ես յետինս ի բանասիրաց եւ անարիս ի հոյլս սպառազինաց, նուաստ ողի Թումա՛, գոլով յԱտրպատական նահանգէ, ի մասնէ Գողթնեաց, ի վայելչագիր գեղջէն Վանանտոյ, պատճառանօք չրջագայութեան անցեալ եղէ յամենավայելուչ կղզին Կիպրոս տասասցեալ՝ յամի հազարերորդի հարիւրորդի եւ վեցտասաներորդի (ՌՃԺԶ=1667) եւ արարեալ ի կղզոջն յայսմիկ տարի մի եւ կէս: Եւ յաւուրսն յայնոսիկ եղեւ նորոգումն սրբոյ տաճարիս, որ է յանուն սուրբ Աստուածածին. որոյ եւ մեք զտաք օժանդակ եւ ձեռնտու, լինելով սատար շինութեան տանս սրբոյ: Եւ մինչդեռ կազմէաք եկեղեցին՝ զտաք յորմ եկեղեցոյն մարմարինեայ խաչ մի, զոր էր կազմեալ յՋ եւ յԹ (1460) թուումն: Այլ եւ պատմութիւնս ինն սակս երաշտութեան յՋ եւ Ժ եւ Զ (1467) թուին, եղեալ ի սկզբան Այսմաւուրացս, ի Սարգիս եպիսկոպոսէ, որ էր լեալ առաջնորդ քաղաքիս Լաւքօշայու: Եւ երրորդ թուական զտաք, որ է ի սկիզբն ճաշու գրոցն, եղեալ ի Դաւիթ եպիսկոպոսէ ումեմնէ յՋԾԳ (1504) թվ.: Ուստի եւ ես ամենամեղս եւ թափուրս ի լաւագունից Թումա լոկ անուամբ յօդեալ յեբամս բանասիրաց, պարտ վարկայ զերեսին զվկայութիւնս զայսոսիկ ի մի վայր պարունակել, զի սոքին երեքեան թիւքս հաստահիմն վկայութեամբ ցուցանեն զլինել տաճարիս սրբոյ ի ձեռս Հայոց յառաջագոյն քան զզալն Տաճկաց: Վասն որոյ խնդրեմ ի սրբազան հարցդ եւ ի համակարիք եղբարցդ զկնի եկելոցդ՝ անմոռաց յիշմամբ ունել ի մտի զօրեղ եւ հաստատուն վկայութիւնս զայսոսիկ, զի դուցէ արդեօք յորժամ երեւեսցին ներհակք ոմանք սակս եկեղեցւոյս սրբոյ, ինքեանց զոլ ասելով, սոքօք դիւրին է հերքել եւ պապանձեցուցանել զամենայն հակառակօղսն: Գրեցաւ սա ձեռօք ամենավարան Թումայի. ՌՃԺ եւ Է (1668) թուին. ամէն:

Թ. 64 եւ 1—3, 7, 8, 10, 13, 14 յիշատակարանները տես նաեւ Բակ, 177—194:

Նկատողութիւններ:

1. Կիրակոս Արեւելցի, «ի վանաց Գետկցի» ծանօթ է մեզի միայն Յայսմաւուրքիս խմբագրութենէն, զոր հանած է ի գլուխ 1269ին Սիս քաղաքի մէջ, 66 տարեկան հասակին:

2. Երբ փոխադրուեցաւ Կիրակոս Կիլիկիա, հաւանօրէն ԺԳ. դարու երկրորդ քառորդին, առած էր հետը օրինակ մը Խաչենցի տէր Իսրայէլ եպիսկոպոսի Յայսմաւուրքէն, զոր խմբագրած էր յանձնարարութեամբ Ամիր-Դօլայ իշխանին եւ Վանական վարդապետի († 1251):

3. Տէր Իսրայէլի Յայսմաւուրքը յարմարցուած էր Յուլեան տոմարի ամիսներուն, Յունուարէն սկսելով, առընթեր դնելով համապատասխան հայկական ամիսները ըստ սարկաւագադիր տոմարին. ուստի Յունուար 1 = Քաղոց ԻԵ: Կ՛արժէր ուսումնասիրել Յայսմաւուրքս: Յամենայն դէպս անճիշդ է 1834ի եւ Պարիսի տպագրութեանց վերագրումը «Տէր Իսրայէլի»:

4. Կիրակոս Գետիկցի իր Յայսմաւուրքը դասաւորած է հայկական ամիսներու համաձայն, նոյնպէս ըստ Սարկաւագադիրին, այսինքն Նաւասարդ 1 = 11 Օգոստոս: Թէ Տէր Իսրայէլի եւ թէ Կիրակոս վարդապետի Յայսմաւուրքներուն հիմ ծառայած է Յայսմաւուրքն ըստ Հոռոմոց ամսոց, սկսելով Հոռոմոց տարեմուտէն, այն է սեպտեմբեր 1 (= 22 Նաւասարդի, ըստ Սարկաւագադրին). որ է «հին թարգմանութիւն ի յունէ հանդերձ սակաւ պատուաստութեամբ ի Հայոց» (Աւգերեան, Լիակ. Վարք, ԺԱ., էջ իբ—հդ): Այդ օրինակը յառաջացած է Յունական Սինաքսարիոնէ մը, որ ի գործածութեան էր Կ. Պոլսոյ յունական Եկեղեցւոյ մէջ:

5. Յունական Սինաքսարիոնի ընտիր հրատարակութիւն մը կատարած են բաղդատութեամբ ձեռագիր եւ տպագիր օրինակներու Բոլլանդեանք. Synaxarium Ecclesiae Constantinopolitanae, opera et studio Hippolyti Delehaye: Propylaeum ad Acta Sanctorum novembris, Bruxellis 1902.

6. Այս Սինաքսարիոնը խմբագրուած է Վասիլ Բ. (976—1025) կայսեր օրով, հաւանօրէն 986էն ոչ շատ վերջը: Առ այս գեղեցիկ ապացոյց կարելի է նկատել յիշատակարութիւնս, զոր պահած է հայերէն թարգմանութիւնը ամբողջութեամբ եւ յունարէն օրինակները կիսով: Սահմի ԺԷ. եւ Հոկտեմբեր ԻԷ. (յոյնը՝ ԻԶ.) կը կարդանք (Թղ. 159բ. յոյնը՝ էջ 164).

«Յայսմ աւուր եղեւ շարժ մեծ ի Կոստանդինուպաւլիս յաւուրս Լեւոնի արքայի Իսաւրիոյ (717—741) եւ մեծ վնաս եղեւ ի մարդիկ եւ ի շինուածս: Եւ յետ երկու հարիւր եւ քառասուն եւ ինն ամաց յաւուրս Բարսիլիոսի (այլ գրչէ վրան՝ Վասլի) եւ Կոստանդինոսի եղբաւր իւրոյ (976—1025), եղեւ յայսմ աւուր (986)[2] ի գիշերի ահաւոր եւ սոսկալի շարժ, որ այնպիսի այլ չէ լեալ ի խաչելութենէն Քրիստոսի. եւ անկաւ մեծ եկեղեցւոյն սրբոյն Սոփեա կամարն յարեւմտից կողմանէ եւ բազում եկեղեցիք եւ բարձրաշէնք ապարանք եւ կամարակապ փողոցք կործանեցան եւ եկաց տարի մի եւ ահ մեծ եղեւ ի քաղաքն»:

7. Հայերէն թարգմանութեան Կիրակոսեան խմբագրութիւնս կը հետեւի յոյն օրինակին ընդհանրապէս: Իր գրչէն պէտք է ենթադրել վկայաբանութեանց կարգին փոփոխութիւնը. եւ նախ իսկ Բիւզանդական տարւոյն (որ կը սկսի Սեպտեմբեր 1ին) Սարկաւագեան տարւոյն պատշաճեցումը (սկսելով Օգոստոս 11էն):

8. Կիրակոս կը գրէ, թէ «ի միասին հաւաքեցի զտօնս սրբոցս Աստուծոյ ըստ կարա-

[2] Lebeau, Histoire de Bas-empire, t. XIV, p. 169—170:

© National Library of Armenia

քանչիւր յիշատակի աւուրց»: Այս յայտարարութեամբ կ'ակնարկէ անշուշտ մէն մի աւուր սրբոց յիշատակէն եաքը գետեղած այն անունները, որոնք տօնելի են նոյն օրը յոյն կամ ֆրանկ եկեղեցիներու մէջ: Այս յաւելուածները չեն նկատուիր ուրիշ ձեռագիրներու մէջ, որոնք այս կամ նման օրինակներէ ծագած են:

9. Երբ կը խոստովանի Կիրակոս, թէ «գրեցի եւ գհամառօտ պատմութիւնս նոցունց, որոց չէր եղեալ ի գիրս Յայսմաւուրց, եւ խառնեցի ընդ նախակարգսն» կ'ի-մանայ անտարակոյս այն «յիշատակները» սրբոց եւ վկայից, որոնք կամ յատուկ էին Հայոց եկեղեցւոյ Տօնացոյցին, եւ կամ որոնց մասին պատմած են հայ մատենագիրները: Ուշադրութեան արժանի է, որ Յայսմաւուրքիս մէջ ներս առնուած են նաեւ Աղուանից Պատմութեան մէջ յիշատակուած սուրբերը եւ անոնց նշխարաց յայտնութիւնները: Այս յաւելուածներու թիւը ձեռագիրներու մէջ կը նշանակուի 108, 112 (1253ին) եւ 170 (1269ին). ուսկից կարելի է հետեւցնել, թէ Յայսմաւուրքս զարգացած է յընթացս տարիներու, ինչպէս իմբաղդին կենդանութեան, նոյնպէս անոր մահէն եաքը մինչեւ ԺԵ. դար:

10. Ինձի ծանօթ է Կիրակոսեան Յայսմաւուրքէն հետեւեալ օրինակները. 1. Կիպրոսի Թ. 2 (1310էն). 2. Բէյրութ, Քափուչիններու վանքին Թ. 1 (1313. գրուած գանազան օրինակներէ). 3. Պարիսի Ազգ. Մատենադարանի Թ. 180 (1316. ասկէ տպագրուած հանդերձ Ֆրանսերէն թարգմանութեամբ. Patrologie Orientale, հատոր Ե. եւ շար.). 4. Վենետիկի Զ. Յայսմաւուրք (1435էն). 5. Երուսաղէմի Թ. 75 (1439էն). 6. Վիեննայի Թ. 7 (1439էն, անանուն). 7. Ա. Յ. Քիւրքճեանի օրինակը ի Կիմիւշխանէ. 8. Յովհ. Գրիգորեան Արծրունւոյ օրինակը (1441էն). 9. Վիեննայի Թ. 219 (ԺԳ.—ԺԳ. դար): Այս վերջինը, որուն գրութեան տարին Հ. Տաշեան նշանակած է սխալմունքով մը «ՌԽ=1591», գրուած է Տիրատուր գրչէ, որ ծանօթ է 1290—1310 շրջանէն: Յիշատակագրութիւն մը՝ «Զկիրակոս վարդապետ Արեւելցի ի Վանայ Գետկցի, գյարմարիչ եւ լուսաւորիչ այսմ կտակի... աղաչեմ յիշել ի բարի», կը վկայէ Յայսմաւուրքիս Կիրակոսեան ըլլալուն: Կ'երեւայ թէ գրուած է Հայ-Հոռոմ շրջանի մը համար. վասն զի կը սկսի Նաւասարդ ԻԲ.=Ա. Սեպտեմբերէն, որ տարեմուտն է Բիւզանդական տոմարին:

3.

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ ԳՐԻԳՈՐ ԽԼԱԹԵՑՒՈՅ

ՀԻՆ Թ. 1. ՌՃԼԳ=1684

ԹՈՒՂԹՔ՝ 567: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 41,3 × 27 սմ.: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ տախտակ: — ՄԱԳԱՂԱԹԵԱՅ ՊԱՀՊԱՆԱԿ՝ չկայ: — ՀԱՆԴԱՄԱՆՔ՝ լաւ. բդ. 1—3 կազմալոյծ: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ԽՈՐԱՆ՝ չկայ: — ԿԻՍԱԽՈՐԱՆ, ՆԿԱՐ, ԶԱՐԴԱԳԻՐ, ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՔ՝ չկան: — ԽՈՐԱԳԻՐՔ՝ կարմիր: — ԺԱՄԱՆԱԿ՝ 1684: — ՏԵՂԻ՝ Երուսաղէմ եւ Կիպրոս: — ԳՐԻՉ՝ Թումա:

Մատեանս է Յայսմաւուրք Գրիգոր Մերենց Խլաթեցւոյ, ընդհանրապէս նոյն Վիենայի Թ. 10 ձեռագրին հետ (հմմտ. Տաշեան, Ցուցակ, էջ 55—101): Կը նշանակեմ միայն.

1. Թղ. 1—3բ. Ցանկ ըստ աւուրց ամսոց:

2. Թղ. 4ա. Նաւասարդի ԻԱ. եւ Օգոստոս ԺԱ. Տօն է Յովհաննու Կարապետին, զոր կարգեաց սուրբ Լուսաւորիչն Հայոց: Յորժամ լուսաւորեաց սուրբն Գրիգոր զՀայս եւ զխոզացեալն Տրդատ...:

Թղ. 5բ. Թագաւոր մի կայր Հայոց Արտաւազ անուն եւ ունէր որդի մի խելագար Շիդար անուն... (հմմտ. Վիեննա, Թ. 7, 2ա. Յուց. 25):

3. Թղ. 6. Նաւ. Բ. եւ Օգ. ԺԲ. Վկայարանութիւն Սրբոյն Անիկտոսի եւ Փոտինոսի...:

4. Թղ. 554ա. (աւարտ Յայսմաւուրքս) Աւելեաց Ե. Աւգոստոս Ժ. Պատմութիւն Բարլաամայ եւ Յովասափայ որդւոյ թագաւորին: Արդ ի մարդանալն... (Թ. 10, 542ա):

5. Թղ. 11բ—15ա. Գովեստ Ներբողեան ի սուրբ Աստուածածինն Առա(ք)եալ վարդապետի ասացեալ: Ով ամենասրբուհի Աստուածածին Մարիամ կոյս...: Վջ. Այլ եւ ստացողի զրոցս Թումային եւ ծնողացն եւ յարմարողի ճառիս Առաքել վարդապետի եւ ծնողաց իմոց...:

6. Թղ. 15բ. Նաւ. Զ. Օգ. ԺԶ. Յիշատակ պատկերին որ ի դաստառակին: Աբգար արքայն Հայոց եւ Ասորւոց լուաւ վասն Քրիստոսի... (հմմտ. Վիեննա 7, 15): Վջ. Հայք Դաստառակ ասեն. եւ Յոյնք՝

Մանտիլ, Ասորիք՝ Թաշկինակ եւ Երրայեցիք՝ Վարշամակ... (հմմտ. Թ. 7, 15):

7. Թղ. 35բ—37ա. Գիւտ գօտւոյն ամենօրհնեալ Աստուածածնին: Ծայրը ունի. «Որոց եւ մեք համաձայնեալ մեծացուցանեմք զմեծարեալն յԱստուածոյ...: Գրեթա յիս որ դաւանողս եմ... (Վիեննա 10, 18ա—20ա. Յ. 57): Ներբողեանիս վերջին հատուածները կը կապեն «Գրիգորի է»:

8. Թղ. 83բ. Տօն է Յղութեան Եղիսաբեթի (Վիեննա 10, 87բ): Կ'աւարտի Ներբողեանով մը, որուն համար կ'ըսուի ի կատարածին. «Գրիգորի վարդապետի ճառս օրինողի»:

9. Թղ. 213բ—216բ. Քաղաց ԻԳ. Դեկտ. ԼԱ. «Յայսմ աւուր յիշատակ քաջ հռետորին եւ տիեզերալոյս վարդապետին մեծին Գրիգորի աշակերտի Յոհաննու Կախիկ կոչեցեալ: Արփիական լոյս անչիջանելի...»: Առաքել Սիւնեցւոյ Անձինքն Նարեկացւոյն. հրտ. Պոտուրեան, Առաքել Սիւնեցի, էջ 301—307:

10. Թղ. 227ա. Քաղաց ԻԷ=Յունվ. Դ. Վկայաբանութիւն Վարդանայ նոր վկային, որ ի Բազէշ քաղաքին († 1421, յունուար 4): Մեծ եւ ահաւոր սքանչելի է խորհուրդ արարչին... (հրտ. Նոր Վկայք, էջ 232—243):

11. Թղ. 237բ—240բ. Գովեստ Ներբողական ի սուրբ Աստուածածինն եւ ի ծնունդն Քրիստոսի ասացեալ յԱռաքել վարդապետէ: Զբերան իմ բացեց յօժարութեամբ կամաց, զի արժանի եղէց անարժանութեամբ իմով ընդունակ լինել շնորհաբաշխ Հոգւոյդ Աստուծոյ...: Վջ. Ողորմեա յարմարողի ճառիս Առաքել վարդապետի:

12. Թղ. 242բ—246ա. Առաքել շնորհալից վարդապետի ասացեալ Գովեստ ոտանաւորի ի սուրբ Աստուածածինն:

Աստուածածին կոյս պատուական
Հօր Աստուծոյ խորհրդական...:

Վջ. Յարմարեցաւ ճառս Ծննդեան եւ Յայտնութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ եւ գովեստ տիրամայր Աստուածածնին ի բարմամեղ Առաքել պիտականուն վարդապետէ ի Նորաշէն Անապատիս որ յանուն սրբուհոյ Աստուածածնին եւ Յովհաննու Կարապետին, ի թուականիս Հայոց ՊԶ (1431): Աղաչեմ ըզընթերցողսդ յիշման արժանի առնել զմեղօք զառածեալս Առաքել եւ զվարժապետն իմ. զքաջ նահատակն զբարբառնապետն Գրիգոր եւ զամենայն հաւատացեալս Քրիստոսի (հմմտ. Սիւրմէեան, Յուց. Հալէպի, Բ. 28, թղ. 487ա):

13. Թղ 277բ. Ս. Եփրեմի վարքին վերջը.

«Ի տէր Ներսեսէ.
Վայրի քօշիկ մի կայր քարձուկ
անուշահոտ եւ սըպըրկուկ
ի Այսորիս եղեւ նա տունկ,
բաներ ասաց չատ մի դիպուկ»:

(Ն. Շնորհալւոյ Բանք չափաւ, էջ 570):

14. Թղ. 294բ—297ա. Մեհեկի Ե.=փետր. ԺԱ. Յիշատակ սուրբ հօրն մերոյ եւ աստուածահաճոյ վարդապետին Մխիթարայ (Սասնեցւոյ), զորոյ զհանդէս ճգնութեանն զմտաւ ածեալ ուրեմն վարդապետի Դանիէլ անուն եւ ասացեալ բան գովեստի...: Վջ. Դանիէլի բանիցս ասողի եւ Գրիգորի վարդապետի սորին սրբագրողի Տէրն տէրանց ողորմեսցի: Հմմտ. Թ. 10, թղ. 306ա. հրտ. Յայսմաւուրք, Կ.Պ. 1834, Ա. 148:

15. Թղ. 321բ—323ա. Ի սմին աւուր Պատմութիւն ամենազօր սուրբ Խաչին որ պարգեւեցաւ ի Թագաւորացն Յունաց Վասլի եւ Կոստանդէայ եւ բերեալ եղաւ ի սահմանս Մոկաց (քաղուած Գրիգոր Նարեկացւոյ Ապարանից Խաչի Պատմութենէն): Կ'աւարտի այսպէս.

Աստուածընկալ խաչ Յիսուսի,
ահեղ նշան Մեսիայի,
Յերկրորդ գալուստ խաչն երեւի
եւ Կարապետ գայ Քրիստոսի.
Յորժամ գայցէ ի հանդիսի,
լուսով լընու գերկիրս ընաւի:
Արքայ զթած Տէր համայնի,
դու ողորմեա ինձ տառապեալ Յովանիսի,
Որ մականուամբ Բրգութ[1] *ասի,*
ի փոքր գեղջէն Վառնիչատի,
Ուր է տապանն Եղիշէի,
աստուածարան վարդապետի,
Մերձ ի քաղաքն յԻրշտունի,
որ այժմ յայտնի Ոստան կոչի.
Կայ առաջի անապատին
որ Պատրկայ վանք անուանի,
Մօրն լուսոյ Աստուածածնի
եւ Գեորգայ զօրավարի:

[1] Ջ. բարեգութ:

© National Library of Armenia

Յարմարեցաւ բանս ի թուին
Հայոց Ռ եւ Լէ (1586),
Մայրաքաղաքս Բաղէշ
ի դուռն սուրբ Յովանիսի,
Տէրըն տացէ եւ ձեզ բարի,
յաւուր մեծի դատաստանի: Ամէն:

Հրտ. Ակինեան, Բաղէշի Դպրոցը, էջ 65—66:

16. Թղ. 342բ. Արեգի Բ.=Ժ. Մարտի. Վկայաբանութիւն Նոր վկային սրբոյն Կարապետին (Ամթեցւոյ, մականուամբ Զէլանկ կոչեցեալ): Այս Վկայաբանութիւնը, այլուստ անծանօթ, տակաւին չէ հրատարակուած:

17. Թղ. 347բ. Արեգի Զ.=ԺԴ. Մարտի. Նահատակութիւն Գրիգոր Բալուեցւոյ († 1290): Թ. 10, 305բ. հրտ. Նոր Վկայք, էջ 104—118:

18. Թղ. 384բ. Ս. Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի ասացեալ ի Թերահաւատութիւն Թումայի: Ցորժամ յարեաւ հովիւն... (Թ. 10, Թղ. 369բ):

19. Թղ. 398բ—400ա. Առաքել վարդապետի ասացեալ երգ վասն տանելոյն Յովսէփայ զՄարիամ ի տուն եւ վասն Աւետեացն հրեշտակապետին: Առեալ Յովսէփ տարաւ զկոյսն Մարիամ ի գիւղն Նազարէթ...: Վջ. այլ եւ ի ստուգութիւն բանիս նա միայն գիտենա, որոյ առաջի ամենայն ինչ մերկապարանոց կայ: (Հանուած Առաքել Բաղիշեցւոյ ոտանաւորած Աստուածածնի Պատմութենէն. Տաշեան, Թ. 499, Թղ. 91բ: Ցուց. 969):

20. Թղ. 414բ. Ահեկի ԺԱ.=ԺԸ. Ապրիլի. Վկայաբանութիւն Սահակայ պարսիկ վարդապետին († 1417): Թ. 10, 422ա, հրտ. Նոր Վկայք, էջ 208/216:

21. Թղ. 422բ. Ահեկի ԺԷ.=Ի. Ապր. Վկայաբանութիւն Նոր վկային Թամարայ: Թ. 10, Թղ. 430ա, հրտ. Նոր Վկայք, էջ 186—197:

22. Թղ. 516ա. Հրոտից Դ.=Ժ. Յուլ. Վկայաբանութիւն Նոր վկայիցն Մելքիսեդեկի եւ Կարապետին († 1203): Թ. 10, Թղ. 511ա. Նոր Վկայք, 198—204:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ: 1. Թղ. 566բ. Գլխաւոր Յիշատակարան. Փառք...: Որ եւ զկս զչորացեալս կանանչեցոյց եւ զանպտուղս պտղաբերեաց, զանկեալս կանգնեաց, զխաւարս լուսաւորեաց, զխմարեալս զգաստացոյց, զթըմբեալս զարդուց. եւ եւ զօրութիւն անչնորհք ձեռացս եւ բոլոր տկար եւ տգէտ իմարիս եւ տրուփիս ամենայն հաւատացելոց անուան իւր ի սկսել եւ յաւարտ հասանել սուրբ գրոցս: Թէպէտ եւ ամենայն մարդկան պարսաւելի եւ ծաղրանք էի սկսիլս, բայց ողորմածն եւ մարդասէրն ոչ արար այնպէս, որպէս էր կարողութիւնս իմ. այլ որ ցամաքեալ յորովայնին զաւակն չնորհեաց, նոյն եւ զանզաւակս ի բարեաց՝ պտղաբերեաց...: Արդ կատարեցաւ սուրբ գիրքս ի թուակ.իս մերում ՌՃԼԳ (1684) ի Կիպրոս կղզիս, ընդ հովանեաւ սուրբ եւ փառաւորեալ մեծապա(յ)ծառ Աստուածածնիս եւ սուրբ Մակարայ՝ ձեռամբ անմիտ Թումայ արեղայիս, որ եմ ի գաւառէն Բալա, ուր տուաւ գիրս Հայոց մեծ վարդապետին Մեսրոպայ: Ի սուրբ Երուսաղէմ սկսեալ եւ եկեալ յաստ կատար եւ աւարտեցաւ, որպէս ցուցանէ զայն որ Երուսաղէմայ միաբան յիշէ, զայնքանն անդ գրեցաւ. եւ այն որ սուրբ Մարակայ դուռն գրեցաւ: Եւ եղաք յիշատակ ի դուռն սուրբ Աստուածածնայ եկեղեցուս մեզ եւ ամենայն հաւատացելոց: Որ եւ արժանի առնէք յիշելոյ զԹումայ արեղայս եւ զծնօղս մեր զՄելիտոն եւ զմայր մեր զՈսկին եւ զեղբարքս մեր զՀարապետն եւ զԿարապետն եւ զԽաչատուրն եւ զքուրս մեր եւ զամենայն արեան մերձաւորքս եւ մեզ վրայ աշխատողացն եւ երախտիք ունօղացն, հոգեւորն ուսուցանողացն եւ մասն բարոյ մեզ ցուցանողացն: Եւ մեր աղքատ լինելուս ով ոք խարճն տայ, Աստուած իւրեան(ն)ց վարցահատուց լինի մեզ իւրեանց մասն բաժին յարքայութեանն. եղիցի (Հրտ. ԲԱԿ 195—196):

2. Թղ. 5բ. Մանաւանդ ողորմեա ստացողի գրոցս տէր Թումա կրօնաւորին եւ ծնօղացն Մելիտոսին եւ Ոսկեհատին եւ եղբարցն Հարապետին եւ Կարապետին եւ Խաչատուրին եւ քրեերցն եւ ամենայն արենառու մերձաւորացն: (Նոյնը յաճախ կրկնուած, նաեւ համառօտ ձեւի մէջ Թղ. 11բ եւ այլն):

3. Թղ. 24ա. Մանաւանդ գրծողիկն սորա տառապեալ Թուման եւ ծնողն նորա: Հմմտ. նաեւ Թղ. 27ա:

4. Թղ. 39ա. Ողորմեայ Քրիստոս Աստուած ստացողի սորա Թումա անարժան կրօնաւորի եւ ծնողաց նորա Կր. եւ Լս. (այսպէս) եւ Պլպուլ (տակինը ջնջուած եւ վրան գրուած) թղթի կոկողին եւ սուրբ Յակոբա

սպասաւորաց: (Իսկ Թղ. 47բ. «եւ թղթի կոկողին Մելքոնին»):

5. Թղ. 63բ. Ողորմի ամենայն հաւատացելոց եւ սուրբ Երուսաղեմայ միաբանիցն: (Նմաններ նաեւ 64ա, 65ա եւն):

6. Թղ. 400բ. Ողորմեայ ամենայն հաւատացելոց եւ սուրբ Մակարայ միաբան եղբարցն եւ գծողի սուրբ գրոցս Թումայի» եւ այլն:

7. Թղ. 566բ (ա՞յլ գրչէ). Աստուած ողորմի Թումային եւ հօրն Միրճանին եւ մօրն Մարթային եւ ամենայն ընտանեացն. քանզի կապելոյն խարճն սա եմ: Աստուած ողորմի Եսայոյն որ զկտրիչն նորոգեաց: Հրտ. ԲԱԿ 196:

8. Թղ. 567ա. Monsieur dicraն հէրքէրէ Ռէմելէ քաղաք ծովուն մուտիք Աստուածածնածին (ա՛յսպէս) եւ սրբոյն Մակարա ծէրամբ հէտ:

Ձեռագրիս Ա. մասն (Նաւասարդ Ա.—Արեգի ԻԹ.) գրուած է Երուսաղէմ. իսկ Բ. մասը (Արեգի Լ.—Աւելեաց Ե.) Կիպրոս ի Ս. Մակար:

(Շարունակելի:) Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՄԸՍԸՐԼԵԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԸ

Հին Հայ Կաթողիկէ Գերդաստաններու մեծանուն շարքին մէջ պատուաւոր տեղ մը կը գրաւէ Մըսըրլեան Գերդաստանը՝ հակառակ անոր որ թէ՛ իր անունը եւ թէ՛ իր գործունէութիւնը մեծ մասով անծանօթ մնացած են: Մըսըրլեանները ազգային բարերարներ են եղած: Ասիկա արդէն կը բաւէր որ հայ սերունդները ոչ միայն չմոռնային, այլ եւ երախտագիտութեամբ յիշէին անոնց պատուական անունը: Եթէ այսօր կը փորձենք Մըսըրլեան Գերդաստանի կենսագրականը ընելով ցոյց տալ անոնց վաստակաւոր տեղը հայ նորագոյն պատմութեան մէջ՝ ունինք գիտակցութիւնը մեր անբաւականութեան մանաւանդ այնպիսի շրջանի մը մէջ, ուր ոչ միայն ատաղձն է պակաս, այլ եւ բուն իսկ ինքը Գերդաստանը սպառած կամ բունաւեր եղած՝ օտար աշխարհներու մէջ ցրուած կորսուած է:

1953 Մարտ 3 թուականով նամակի մը մէջ Պոլսոյ Հայ Կաթ. Համայնքի Վիճակաւոր Գերապայծառ Պօղոս Արքեպ. Քիրէճեան կը գրէ որ «Այժմ այս հոյակապ գերդաստանէն Պոլսոյ մէջ այր մարդ մնացած չէ»:

Մեր ջանքը պիտի ըլլայ, հետեւաբար, այսօր կորուստէ փրկել, ինչ որ տակաւին կարելի է փրկել: Վաղը գուցէ այսքանն ալ կարելի պիտի չըլլայ:

Ա. ՄԸՍԸՐԼԵԱՆՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ

Մըսըրլեան Գերդաստանի անդամներու հնագոյն յորջորջումն եղած է — Մըսըրլը — թրքական անուանակոչում մը, որ ցոյց կուտայ թէ անոնց ծագումը Եգիպտոսի մէջ փնտռելու ենք: Ասիկա մասամբ կը հաստատէ պարիսարնակ մեր յարգելի բարեկամ Պ. Ղեւոնդ Թընկըրեան, որ կը գրէ. Leurs noms qu'ils adoptèrent, proviennent que ceux-ci s'enrichirent dans la négoce avec la Syrie et l'Egypte.

Հարցը կը մնայ սակայն միշտ կարօտ լուսաբանութեան, քանի որ չենք գիտեր թէ «Մըսըրլը» յորջորջումը Գերդաստանի սկզբնակա՞ն անունը եղած է թէ յետոյ իբրեւ տիտղոս առնուած է: Հաւանականն այն է որ Գերդաստանի անդամներու Պոլիս հաստատուելու առթիւ «Մըսըրլը» յորջորջումը իւրացուցած են՝ իբր յիշատակ իրենց նախկին սերտ կապակցութեան Եգիպտոսի հետ:

Հետաքրքրական է որ Հ. Գրիգորիս Ծ. Վ. Գալէմքիարեանի ձեռագիրներուն մէջ անդամ մը, այն է՝ Անտոն Վ. Մըսըրլեանի անուան քով գործածուած է նաեւ Եաղլըքճեան անունը: Մըսըրլեան — Եաղլըքճեան ի՞նչ ազերս կայ երկուքին միջեւ՝ անծանօթ է մեզ:

Թէ ե՞րբ հաստատուած են Մըսըրլեանք Պոլսոյ մէջ՝ չունինք տեղեկութիւն: Այս Գերդաստանէ պոլսեցի հնագոյն անձը Ժ.Ը. դարու կէսերէն է: Տարակոյս չկայ թէ այդ թուականէն շատ աւելի հին է սակայն անոնց գոյութիւնը Պոլսոյ մէջ:

Բ. ՄԸՍԸՐԼԵԱՆՑ ՀՆԱԳՈՅՆ ԱՆՁԸ

Մըսըրլեան Գերդաստանէն մեզի ծանօթ հնագոյն անձն է Անտոն վարդապետ Մըսըրլեան (Եաղլըքճեան), որ 1758էն վերջ եղած

© National Library of Armenia